# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

38ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 42 (1892) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 10, 2018
VOLUME 38, NO. 42 (1892) SATURDAY NOVEMBER 10, 2018

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

# «Թրամփիզմի» Մերժումը

Երեքշաբթի օր տեղի ունեցած Համաամերիկեան՝ նախագահական կիսաշրջանի ընտրութիւնները առաջին հերթին մերժում էին երկու տարի առաջ անակնկալօրէն նախագահի պաշտօնին տիրացած Տանըլտ Թրամփին ու անոր վարած քաղաքականութեան:

Ներկայացուցիչներու Տունէն ներս իշխանութեան փոփոխութիւնը պարզապէս մէկ կուսակցութենէն, մէկ այլ կուսակցութեան անցում մը չէր: Այս փոփոխութիւնը քաղաքական երկրաշարժ պիտի յառաջացնէ երկրէն ներս:

Նախագահ Թրամփ իր պաշտօնավարման առաջին տարիներուն, Գոնկրէսի երկու պալատներէն ներս իր կողքին ունենալով հանրապետական մեծամասնութիւն, երկիրը առաջնորդեց սխալ ուղղութեամբ: Ան փորձեց եւ մասամբ յաջողեցաւ ջնջել նախագահ Օպամայի օրով հաստատուած առողջապահական օրէնքը, որ միլիոնաւոր Ամերիկացիներուն առիթ տուած էր ապահովագրութիւն ունենալ: Անտեսեց միջավայրի պահպանութեան ուղղուած օրէնքները, մեծահարուստներուն տուաւ հարկային յաւելեալ արտօնութիւններ, այդպիսով ազգային պարտքը աւելցնելով մէկ ու կէս թրիլիոն տոլարով, Գերագոյն Դատարանէն ներս նշանակեց ծայրայեղ պահպանողական դատաւորներ, գաղթականներու զաւակները անջատեց իրենց ծնողներէն եւ բազմաթիւ այլ որոշումներ, որոնք ընդունելի չէին ժողովուրդի մեծամասնութեան կողմէ:

Այս բոլորի կողքին, Թրամփ փոխանակ միաւորելու ժողովուրդը եւ բոլորի նախագահը դառնալու, երկրէն ներս ստեղծեց պառակտում՝ տարբեր համայնքներու, կրօնքներու եւ փոքրամասնութիւններու միջեւ: Թրամփ, մարդկային զգացումներ քրքրող ելոյթներով իր կողմնակիցները դարձուց «աղանդաւորներ», որոնք կուրօրէն սկսան հաւատալ իր ըսածներուն, հակառակ որ, անոր խօսքերուն մեծ մասը հիմնուած են սուտի եւ կեղծիքի վրայ:

Ներկայացուցիչներու Տան վերապահուած է նախագահի գործունէութիւնը վերահսկողի դեր: Սակայն, Հանրապետականները թերացան ստանձնել այդ սահմանադրական պարտականութիւնը: Դեմոկրատները վերատիրանալով Ներկայացուցիչներու Տան, այժմ պիտի կարողանան զսպել Թրամփի սանձարձակ գործողութիւնները՝ զինք հրաւիրելով պատասխանատուութեան:

Այս ընտրութիւններուն Ամերիկայի ժողովուրդը քուէարկելով Դեմոկրատներուն, մերժեց Թրամփն ու անոր վարած «թրամփիզմի»:

«ՄԱՍԻՍ»

# Նիկոլ Փաշինեան Ընդունեց Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան Պատուիրակութիւնը

*Վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը Նոյեմբերի 6-ին ընդունեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամները՝ ատենապետ Համբիկ Սարաֆեանի գլխաւորութեամբ:*

*Հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայաստան-Սփիւռք կապերուն, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան մէջ տեղի ունեցող քաղաքական փոփոխութիւններուն առնչուող հարցեր:*

*Նիկոլ Փաշինեանը կարեւորած է ՍԴՀԿ դերը հայապահպանութեան, Հայաստան-Սփիւռք համագործակցութեան ամրապնդման գործին մէջ եւ յոյս յայտնած, որ ներհայաստանեան քաղաքական իրադարձութիւնները նոր ազդակ կը հաղորդեն Սփիւռքի եւ սփիւռքահայ քաղաքական կառոյցներու հետ յարաբերութիւններուն:*

*ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան ատենապետը ողջունեց Հայաստանի մէջ տեղի ունեցող փոփոխութիւնները եւ շեշտեց, որ ՍԴՀԿ-ն անվերապահ կ՚աջակցի Նիկոլ Փաշինեանին՝ ժողովրդավարական, իրաւական պետութեան կառուցման, տնտեսութեան զարգացման եւ բարեփոխումներու իրականացման գործին մէջ:*




**ՍԴՀԿ պատուիրակութեան հանդիպումը Նիկոլ Փաշինեանի հետ**

*Զրուցակիցները անդրադարձան Հայաստան-Սփիւռք կապերու յետագայ սերտացման հարցին: Նիկոլ Փաշինեանը կարեւոր նկատեց Հայաստանի զարգացման օրակարգին մէջ սփիւռքահայութեան մեծ ներուժի ներգրաւման գործին վերաբերեալ կառուցուածքներու ձեւաւորումը: ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամները նշեցին, որ պատրաստ են աշխոյժ համագործակցիլ ՀՀ կառավարութեան հետ այդ ուղղութեամբ:*

# Դեմոկրատները Տիրացան Ներկայացուցիչներու Տան, Հանրապետականները Պահեցին Ծերակոյտը

*Նոյեմբեր 6-ին, Միացեալ Նահանգներու տարածքին տեղի ունեցան կիսաշրջանի ընտրութիւնները, որոնց արդիւնքով Դեմոկրատ կուսակցութիւնը յաղթական դուրս գալով, 8 տարուայ ընդմիջումէ ետք, դարձեալ տիրացաւ Գոնկրէսի Ներկայացուցիչներու Տան մեծամասնութեան:*

*Միւս կողմէ, Նախագահ Թրամփի Հանրապետական կուսակցութիւնը պահեց Ծերակոյտի մէջ իր ունեցած մեծամասնութիւնը:*




*Ներկայացուցիչներու Տան 435 տեղերուն համար մղուող պայքարի աւարտին, Դեմոկրատները ապահոված են 230 աթոռներ, Հանրապետականները՝ 205, իսկ մնացեալ տեղերու ճակատագիրը տակաւին կը մնայ անորոշ:*

*Այսպիսով, Սան Ֆրանսիսքոյի շրջանէն ընտրուած Նանսի Փլոսի, որ այժմ Դեմոկրատ մեծամասնութեան առաջնորդն էր, շատ հաւանաբար դառնայ Ներկայացուցիչներու Տան կին խօսնակը: Այս առթիւ յատկանշական դարձաւ, որ Ամերիկայի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Գոնկրէսի Վարին Պալատէն ներս պիտի պաշտօնավարեն 100-է աւելի իգական ներկայացուցիչներ:*

*Ծերակոյտէն ներս Հանրապետականները իրենց դիրքերը աւելի ամրապնդեցին, ունեցած երկու ձայնի առաւելութիւնը բարձրացնելով առնուազն չորսի:*

*Բացի Գոնկրէսէն ներս արձանագրուած յաջողութիւններէն, Դեմոկրատ կուսակցութիւնը կարողացաւ ամրապնդել իր դիրքերը Նահանգներու մակարդակով: Եօթը նահանգներու մէջ կառավարիչի պաշտօնը Հանրապետականներէն անցաւ Դեմոկրատներուն:*

*Արձանագրուած արդիւնքներէն ետք Հանրապետական նահանգապետերու թիւը իջաւ 27-ի, իսկ Դեմոկրատներունը բարձրացաւ 23-ի: Այս փոփոխութիւնները կրնան ազդել նաեւ երկու տարի ետք տեղի ունենալիք նախագահական ընտրութիւններու արդիւնքներուն վրայ:*

*Ինչ կը վերաբերի Քալիֆորնիոյ մէջ արձանագրուած արդիւնքներուն, Նահանգի կառավարիչ ընտրուեցաւ Դեմոկրատ Կէվըն Նիւսըմ, որ վերջին տարիներուն միշտ մասնակցած է Ապրիլ 24-ի քայլարշաւներուն եւ ելոյթ ունեցած է Լոս Անճելըսի Թրքական հիւպատոսարանին առջեւ:*

*Ծերակոյտի ընտրութիւններուն Դեմոկրատ Տայան Ֆայնսթայն վերընտրուեցաւ յաջորդ 6 տարիներուն համար:*

*Ներկայացուցիչներու Տունէն ներս Հայաշատ շրջանները ներկայացնող Դեմոկրատ Ատամ Շիֆ վերընտրուեցաւ: Ան մեծ առաւելութեամբ պարտութեան մատնեց Հանրապետական Ճոնի Նալպանտեանին:*

*Ներկայացուցիչներու Տունէն ներս Հայ արմատներ ունեցող գոնկրէսականներուն վրայ աւելցաւ եւս մէկը, որ եկաւ միանալու Քալիֆորնիայէն ընտրուած Ճէքի Սփիրին եւ Աննա Աշուլին: Նիւ Եորք նահանգէն Գոնկրէսի անդամ ընտրուեցաւ Դեմոկրատ Անթոնի Պրինտիսի, որ պարտութեան մատնեց իր Հանրապետական մրցակիցին:*

*Նեվատա նահանգէն մէջ, այլ մէկ Հայ թեկնածու՝ Հանրապետական Տէնի Թարքանեան դարձեալ չկարողացաւ յաջողութեան հասնիլ:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Տագնապների Արտաhերթը. Ական՝ Դրուած Յեղափոխութեան Տակ

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

Մինչեւ երէկ խորհրդարանական արտահերթ ընտրութիւնների հիմնական փաւորիտների հարցում յստակութիւնն աւելի մեծ էր: Ցամենայն դէպս՝ Երեւանի աւագանու ընտրութիւնների արդիւնքները յուշում էին, որ «Լոյս» դաշինքը կարող է յայտնուել փաւորիտների ցանկում: Հիմա նման հեռանկար չկայ, որովհետեւ «Լոյսի» կուսակցութիւններն ընտրութիւններին մասնակցելու են առանձին-առանձին ու նրանց իրական հնարաւորութիւնները գոնէ այս պահին չափելի չեն:

Այս պահին առաջատար եռեակը, գոնէ արտաքին տպաւորութեամբ, այն ուժերն են, որոնք ներկայացուած են խորհրդարանում. հենց այդպիսի դասաւորութիւն է ենթադրում գործող ԸՕ-ի տրամաբանութիւնը:

Նիկոլ Փաշինեանի «Իմ քայլը» դաշինքն անվիճելի առաջատար է ու սա ընդունում են բոլորը. խորհդարանական ընտրութիւններում ժողովուրդն, ըստ էութեան, ուղղակի ընտրութեամբ Նիկոլ Փաշինեանին ընտրելու է վարչապետ:

Քաղաքական դաշտը նման է աւերակների ու այս պարագայում որքան համոզիչ լինի «Իմ քայլի» յաղթանակը, այնքան՝ ամուր կը լինի յեղափոխութեան թիկունքը: Միւս կողմից՝ ակամայից սարսափում ես, երբ այս օրերի լրատուական հոսքերից տեղեկանում ես, թէ ովքեր են համալրելու ՔՊ-ի ռէյտինգային ցուցակները: ՀՀԿ-ի նախկին «տասովշիկները» հերթեր են գոյացրել Փաշինեանի կուսակցական գրասենեակի դրանը՝ յաւակնելով հիմա էլ ծառայութիւն մատուցել նոր տէրերին: Սրանք ճամբարափոխութեան մեծ «վարպետներ» են ու եթէ հիմնաւոր լինի ԶԼՄ-ների տեղեկատուութեան անգամ մի մասը, ապա խորհրդարանական ապագայ մեծամասնութիւնն իրապէս կարող է յեղափոխութեան տակ դրուած ական լինել:

Միւս կողմից՝ յեղափոխութիւնը տեղի է ունեցել առանց քաղաքական հարթակի ու ուղերձների, ՔՊ-ն չի հաւատում «իզմերի» ու այս ամէնը պարարտ հող է ստեղծում, որպէսզի կառավարող կուսակցութիւնն այդպէս էլ չդառնայ ինստիտուցիոնալ կուսակցութիւն՝ կրկնելով ՀՀՇ-ի բիւրոկրատացման կամ ՀՀԿ-ի օլիգարխացման տխուր նախադէպերը:

Բոլոր կանխատեսումներով խորհրդարանական երկրորդ ուժը շարունակելու է մնալ ԲՀԿ-ն, որը տիպիկ օլիգարխիկ կուսակցութիւն է ու երբեք չի ունեցել գաղափարական կողմնորոշում կամ քաղաքական այցեքարտ ու հիմա կանգնած է տոտալ ինստիտուցիոնալ ճգնաժամի շէմին:

Յեղափոխութիւնն, ըստ էութեան, կործանել է այս ուժը, սակայն Գագիկ Ծառուկեանը փորձում է իրավիճակը փրկել պարզունակ ռեբրենդինգի միջոցով՝ կուսակցութեան հնաբնակներին փոխարինելով մի քանի նոր դէմքերով: Մինչդեռ՝ ԲՀԿ ճգնաժամի հիմնական պատճառը հենց Ծառուկեանի ժամանակավրէպ դարձած ներկայութիւնն է քաղաքական դաշտում: Սակայն կուսակցութիւնն արդէն ունի որոշում. անկախ ԲՀԿ-ի առանձին կամ դաշինքով մասնակցութիւնից՝ ցուցակը գլխաւորելու է Գագիկ Ծառուկեանն, ինչը ենթադրում է, որ որեւէ քաղաքական կրէատիւ չի կարելի սպասել նաեւ խորհրդարանական երկրորդ ուժից:

«Լոյսի» լուծարումից յետոյ խորհրդարանում ներկայացուած լինելու իրական հնարաւորութիւններ ունի իրեն պահպանողական հռչակած ՀՀԿ-ն: Իհարկէ, Սերժ Սարգսեանի կուսակցութիւնն այնքանով կապ ունի եւրոպական պահպանողականութեան հետ, ինչքանով քրէաօլիգարխիան՝ քաղաքականութեան հետ: Թւում էր՝ յեղափոխութիւնը չէզոքացրած պէտք է լինի ՀՀԿ-ի գործօնը, սակայն այդ կուսակցութիւնն, այնուամենայնիւ, պահպանել է որոշակի կենսունակութիւն՝ նոյնիսկ չարդիականացուած վիճակում, երբ իր մէջ կրում է քրէաօլիգարխիայի տխուր ժառանգութիւնը:

Սա ինքնին խօսում է ոչ թէ ՀՀԿ-ի արդիւնաւէտութեան, այլ նոր համակարգ ստեղծելու՝ յեղափոխութեան թիմի անկարողութեան մասին: ՀՀԿ-ն արտաքին եւ ներքին ահռելի ինֆորմացիա, կապեր ու պրոֆեսիոնալիզմ ունի ու եթէ սրան յաւելենք ռէյտինգային համակարգի ձեւաւորած հարագատ միջավայրը, ապա կարող է ընտրութիւններից յետոյ նոյնպէս՝ յաւակնել խորհրդարանական կուսակցութեան կարգավիճակին: Իհարկէ, ՀՀԿ-ն որեւէ պարագայում չի կարող դառնալ դասական ընդդիմութիւն Նիկոլ Փաշինեանի իշխանութեան համար, որովհետեւ քանի այդ կուսակցութեան ղեկին գտնւում է Սերժ Սարգսեանն, ապա առնուազն անտեղի է խօսել կուսակցութեան արդիականացման կամ ռեբրենդինգի մասին:

Ընդհանուր այս համատեքստն առանձնապէս լաւատեսութեան հիմքեր չի ստեղծում, եւ ընտրութիւնները առողջացնելու փոխարէն՝ կարող են քաղաքական դաշտը աւելի հիւանդացնել: Մեր քաղաքական համակարգը կարող է հասնել խրոնիկ հիւանդութեան մակարդակի ու ընդամէնը երկու-երեք տարի յետոյ հասունացնել խորհրդարանական նոր արտահերթ ընտրութիւնների պահանջ, ինչի մասին կանխատեսում են քաղաքական ուժերի ու փորձագէտների մի մասը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒՈՒԱԿԱՆ»

**Նիկոլ Փաշինեանի «Իմ քայլը» դաշինքն անվիճելի առաջատար է ու սա ընդունում են բոլորը. խորհդարանական ընտրութիւններում ժողովուրդն, ըստ էութեան, ուղղակի ընտրութեամբ Նիկոլ Փաշինեանին ընտրելու է վարչապետ**

# Ովքե՞ր Են Շահում «Ոչ Քաղաքական» Դէմքերից

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

1995 թուականի խորհրդարանական ընտրութիւններից առաջ գաղափար կար անցնելու 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին: Սակայն ի վերջոյ փաստարկ բերուեց, որ կուսակցութիւնները Հայաստանում չեն կայացել, ինչպէս նաեւ յայտարարուեց, որ Սահմանադրութեան ընդունումից յետոյ առաջին գումարման Ազգային ժողովն «անցումային» բնոյթ ունի: Արդիւնքում համամասնականը չնչին տեղ գրաւեց՝ չնայած հենց դրա շնորհիւ Ազգային ժողով մտան ընդդիմադիր ԱԺՄ-ի եւ ԱԻՄ-ի երեքական պատգամաւորներ, որոնք գումարուեցին մեծամասնականով ընտրուած սակաւաթիւ այլ օրէնսդիրներին: Ճնշող մեծամասնութիւնը, սակայն, կազմեցին իշխանամէտ «ոչ քաղաքական» դէմքերը, որոնք խորհրդարան մտան փողի, իսկ երբեմն նաեւ՝ բռնութիւնների շնորհիւ:

Այդ դէմքերը՝ գործարարները, «լաւ տղերքը», ինչպէս նաեւ սկզբունքներ չունեցող կարիերիստները մշտապէս իշխանութեան կողքին են՝ անկախ նրանից, թէ ինչպէս է հնչում առաջին դէմքի ազգանունը: Եւ դա ունի իր բացատրութիւնը՝ այդ «ոչ քաղաքական» դէմքերն առաւել խոցելի են, նրանք կորցնելու շատ բան ունեն եւ դրա համար գերադասում են մնալ իշխանութեան «շուաքի տակ»: Իշխանութեանն էլ է ձեռնտու «ձեռքի տակ» ունենալ նման պատգամաւորների. երբ իրավիճակը կայուն է, նրանց լոյալութիւնն ապահովուած է: Եթէ տեղի է ունենում պալատական յեղաշրջում (1998) կամ յեղափոխութիւն (2018), ապա ճիշտ նոյն ձեւով ապահովուած է նրանց ճամբարափոխութիւնը եւ լոյալութիւնը յաջորդ իշխանութիւններին: Գուցէ հենց այդ պատճառով էլ 1995-ին հրաժարուեցին 100 տոկոս համամասնականից՝ այդպէս աւելի հեշտ էր պահպանել իշխանութիւնը:

Յետագայում մեծամասնականը, իսկ վերջին ընտրութիւններում՝ թաքնուած մեծամասնականը՝ բաց տարածքային ցուցակների տեսքով, ամենայն հաւանականութեամբ նոյն նպատակն ունէին: (Ի դէպ, մենք թիւրիմացաբար այդ ընտրակարգն անուանում ենք «ռէյտինգային», բայց իրականում վարկանիշայինը միանգամայն այլ բան է, բայց խառնաշփոթ չստեղծելու համար շարունակենք օգտագործել «ռէյտինգային» եզրը):

Այս Հոկտեմբեր ամսին իշխանութիւնը հնարաւորութիւն ունէր անցկացնելու նոր Ընտրական օրէնսգիրքը՝ իր տրամադրութեան տակ ունենալով բաւականաչափ ձայներ («Ելք»+ԲՀԿ+ՀՅԴ+«փոշմանած ՀՀԿ-ականներ»): Սակայն կա՛մ չկարողացաւ կազմակերպել համապատասխան քուէարկութիւն, կա՛մ ինչ-ինչ պատճառներով չցանկացաւ դա անել: Դա սկզբունքօրէն չի փոխի նոր խորհրդարանում տեղերի բաշխուածութիւնը՝ պարզ է, որ ՔՊ-ն կամ «Իմ քայլը» կազմելու է կայուն մեծամասնութիւն: Քանակը «ռէյտինգայինով» կամ առանց «ռէյտինգայինի» առանձնապէս չի փոխուի, բայց ընտրակարգը կ՚ազդի որակի վրայ՝ իշխանական եւ ԲՀԿ-ական խմբակցութիւններում «ոչ քաղաքական» մարդիկ աւելի շատ կը լինեն, քան լաւ կամ վատ քաղաքական գործիչները: Մնում է, որ առաջիկայ 5 տարիների ընթացքում կուսակցութիւնները յիշեն իրենց բազմիցս յայտարարագրած սկզբունքների մասին, եւ 2023 թուականի ընտրութիւններն անցկացուեն, վերջապէս, 100 տոկոսանոց համամասնական կարգով:

«ԱՌԱՒՕՏ»

**Այս Հոկտեմբեր ամսին իշխանութիւնը հնարաւորութիւն ունէր անցկացնելու նոր Ընտրական օրէնսգիրքը՝ իր տրամադրութեան տակ ունենալով բաւականաչափ ձայներ: Սակայն կա՛մ չկարողացաւ կազմակերպել համապատասխան քուէարկութիւն, կա՛մ ինչ-ինչ պատճառներով չցանկացաւ դա անել**

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# «Լոյս» Դաշինքը Այլեւս Գոյութիւն Չունի



Արամ Սարգսեան եւ Էտմոն Մարուքեան երբ դաշնակիցներ էին

*«Հին Ընտրական օրէնսգիրքը ուժի մէջ մնալու հանգամանքը, նաեւ վարկանշային ընտրակարգն իրենց ազդեցութիւնն ունեցել են մեր բոլորի որոշումների կայացման վրայ»,-լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ըսած է «Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան նախագահ Էտմոն Մարուքեանը:*

*«Մենք կը գտնենք, որ լաւագոյն տարբերակը սա է: Միւս կողմից մեր համագործակցութեան հնարաւորութիւնները, թէ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան, թէ «Հանրապետութիւն» կուսակցութեան հետ սպառուած չեն, ապագային նման հնարաւորութիւնների դէպքերում ի շահ Հայաստանի եւ ի բարօրութիւն քաղաքացիների նման համագործակցութիւններ հնարաւոր են», ըսած է Է.Մարուքեանը:*

*Հարցին, թէ խորհրդարան անցնելու հնարաւորութիւնները աւելի մեծ է առանձին-առանձին մասնակցելո՞ւ պարագային, թէ՝ «Լոյս» դաշինքով, «Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան նախագահը պատասխանած է. «Մենք այդ հարցին չենք նայել , նայել ենք ընտրական իմաստով աւելի ճկուն լինելու առումով: Ես կարծում եմ, որ երկու ուժերն էլ յայտնուելու հնարաւորութիւն ունեն նաեւ այս ֆորմաթով: Մտահոգութիւն չունեմ, որ ուժերը չեն յայտնուի: Եթէ մենք չյայտնուենք, բա? էլ ով պէտք է յայտնուի»:*

*Հարցին, որքանո՞վ յստակ է տեղեկատուութիւնը, որ դուք առաջարկած էք Արամ Սարգսեանին հանդէս գալ «Լուսաւոր Հայաստանի» ցուցակով, ինչին ան չէ համաձայնած, Մարուքեանը ըսած է. «Քննարկումներ եղել են կուսակցութիւնների ցուցակներով մասնակցելու շուրջ, բայց դրա հետ մէկտեղ այլ քննարկումներ են եղել: Որեւէ վէճ չի եղել: Մեր խորհուրդը մի հարցի վերաբերեալ մի մօտեցում է ունեցել, միւս խորհուրդը՝ այլ մօտեցում, դրանք մանրամասն քննարկել ենք»:*

*Պատասխանելով մէկ այլ հարցի, թէ խորհրդարան անցնելու պարագային «Լուսաւոր Հայաստանը» ընդդիմութի?ւն պիտի ըլլայ, ան ըսած է. «Ժողովուրդը կ'որոշի, ընտրութիւնները պէտք է աւարտուեն, որ մենք հասկանանք՝ ուր ենք, կախուած է ուժերի ստացած չափաբաժիններից եւ համամասնութիւններից»:*

*Է. Մարուքեանը ըսած է, որ իրենց ցուցակին մէջ ընդգրկուած պիտի ըլլան տարբեր քաղաքացիական խումբերէ, տարբեր կուսակցութիւններէ ներկայացուցիչներ, որոնք ռէյթինկային ընտրակարգով պիտի առաջադրուին: «Մենք որոշում ունենք՝ աշխատելու ենք ցուցակում չներգրաւել նախկին գործիչների, որքան ձայն էլ ուզում են նրանք կարողանան հաւաքել որեւէ տեղից, որոնք անցած ճանապարհ կ'ունենան, որը, ըստ էութեան, կարող են ստուերել «Լուսաւոր Հայաստանի» լոյսից թէկուզ 0,1 տոկոս: Մենք հիմա ամէն օր առաջարկներ ենք ստանում»,- ըսած է. Մարուքեանը:*

# Արտախորհրդարանական Ուժերը Մտահոգուած են՝ Գործող ԸՕ-ով Ապաքաղաքական Խորհրդարան Պիտի Ձեւաւորուի

*Գործող Ընտրական օրէնսգիրքով արտահերթ ընտրութիւններու իրականացումը մտահոգած է արտախորհրդարանական շարք մը քաղաքական ուժերու:*

*Հայ ազգային քոնկրեսի փոխնախագահ Արամ Մանուկեանը մտահոգուած է, թէ Ընտրական օրէնսգիրքի փոփոխութիւններու նախագիծով պիտի ստեղծուէր քաղաքական խորհրդարան ձեւաւորելու հնարաւորութիւն, իսկ գործող տարբերակով անխուսափելի են նախկին իշխանութեան բնորոշ արատաւոր երեւոյթները:*

*«Արդէն ակնյայտ է, որ գաղափարական մրցակցութիւն չի լինելու, արդէն ակնյայտ է, որ ծրագրային մրցակցութիւն չի լինելու եւ երեւի արդէն ակնյայտ է, որ լինելու է կրկին սեւի ու սպիտակի պայքար, լինելու է իշխանութեան եւ հակաիշ-խանութեան պայքար, եւ այդ պայքարի մէջ այդ քաղաքական քոմփոնենթը (բաղադրիչ) կորելու է», - ըսած է Արամ Մանուկեանը:*

*Քոնկրեսի մէջ Նոր Ընտրական օրէնսգիրքի տապալումէն ետք կը շարունակուին քննարկումները՝ մասնակցի՞լ արտահերթին, թէ՞ ոչ, եւ արդեօ՞ք իրենց ծրագիրը վարկանշային թեկնածուներու կանխատեսելի ընտրապայքարին մէջ մրցակցային պիտի ըլլայ:*

*«Քննարկումները շարունակւում են, բայց ակնյայտ է, որ մեր խաղաքարտը, ծրագիրը, ազատական տնտեսութեան ներկայացումը որպէս Հայաստանի զարգացման մոտել այլեւս լուրջ խաղաքարտ չի լինելու յառաջիկայ մրցակցութեան համար», - նշած է Հայ ազգային քոնկրեսի փոխնախագահը:*

*Նոր Ընտրական օրէնսգիրքի տապալումը չէ փոխած «Ժառանգութեան» որոշումը: Անկախ ակնկալիքներէն՝ պիտի մասնակցին ընտրութիւններուն: Դեռ չեն կողմնորոշուած մասնակցութեան ձեւաչափի եւ ցուցակը գլխաւորող թեկնածուի հարցի վերաբերեալ:*

*««Ժառանգութիւնը» բոլոր ընտրութիւնների պայմաններում է մասնակցել ընտրութիւններին, աճաբեկումների շրջանում է մասնակցել ընտրութիւններին եւ մեզ համար որեւէ խնդիր չկայ մասնակցելու առումով այդ տեսանկիւնից», - ընդգծած է «Ժառանգութեան» վարչութեան նախագահ Արմէն Մարտիրոսեանը:*

*Մարտիրոսեանը մտավախութիւն ունի, որ գործող Ընտրական օրէնսգիրքը նախկին իշխանութիւն՝ Հանրապետականի համար վերակենդանացման որոշակի հնարաւորութիւն կը ստեղծէ, եւ այդ անխուսափելի կը դարձնէ նախկին գործելաոճը:«Սասնայ ծռեր» կուսակցութեան ղեկավար մարմնի անդամ Վարուժան Աւետիսեանի կանխատեսմամբ՝ դժուարու-թիւններ սպասելի են, բայց իրենց համակիրներու շրջանին յենարան պիտի ունենանք - «Ես մտավա-խութիւն ունեմ, որ նաեւ կը լինեն ընտրութիւնները կեղծելու փորձեր, որոնց մի մասը կամ մի զգալի մասը, քանի որ շատ կարգաւորուած մեխանիզմ էր նոյնիսկ հնարաւոր չի լինի բացայայտել եւ պատասխանատուութեան ենթարկել մեղաւոր-ներին:*

# Յովիկ Աբրահամեանի Ջերմոցները Շուրջ 15 Տարի Ոռոգուած են Ապօրինի Խողովակներով

*Նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեանի ընտանիքին պատկանող ջերմոցները շուրջ 15 տարի ոռոգուած են ապօրինի տեղադրուած խողովակներով: Այս մասին կատարուած ուսումնասիրութիւններէն ետք յայտարարութիւն տարածած է Պետական վերահսկողութեան ծառայութիւնը:*

*Յայտնաբերուած խողովակաշարերով, նախնական հաշուարկով, աւելի քան 15 տարի ջուր հոսած է խաղողի այգիները ոռոգելու նպատակով, սակայն անկէ մէկ մասին համար առկայ են չնչին վճարումներ:*

*Խախտումը արձանագրուած է տեղւոյն վրայ, տարածքի մէջ ներկայ եղած են Ջրային կոմիտէի «Ջրառ» ՓԲԸ տնօրէնը, տեղակալը, գլխաւոր ճարտարագէտը, «Արտաշատ ՋՕԸ»-ի եւ Արտաշատի մարզպետարանի ներկայացուցիչներ եւ ոստիկանութեան մարզային բաժնի աշխատակիցներ:*



*«Արտաշատ Ունինքոմ» ՍՊԸ-ն եւ ջերմոցները կը պատկանին նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեանի ընտանիքին:*

*Դէպքի առիթով ՀՀ Ոստիկանութեան Արարատի մարզի Արտաշատի բաժնէն ներս կը նախապատրաստուին նիւթեր:*

# Հայաստանի Ազգային Ժողովը Լուծարուեց Արտահերթ Ընտրութիւնները Նախատեսուած է Դեկտեմբեր 9-ին

*Ազգային ժողովը, ինչպէս նախատեսուած էր դէմ քուէարկեց վարչապետի պաշտօնին Նիկոլ Փաշինեանի թեկնածութեանը: Կողմ՝ 0, դէմ՝ 0, ձեռնպահ՝ 13 ձայներու յարաբերակցութեամբ խորհրդարանը դէմ քուէարկեց միակ թեկնածուի օգտին: Այս առաջադրումը, ինչպէս եւ նախորդը, ձեւական բնոյթ կը կրէր:*

*«Ոչ բռնի թաւշեայ ժողովրդական յեղափոխութիւնից յետոյ մենք Հայաստանի իշխանութիւնը լիարժէքօրէն վերադարձնում ենք Հայաստանի քաղաքացիներին», - Ազգային ժողովի մէջ իր ելոյթի ժամանակ յայտարարած է վարչա-պետի պաշտօնակատար, վարչա-պետի թեկնածու Նիկոլ Փաշինեանը՝ պահը պատմական գնահատելով:*

*«Ուզում եմ գնահատել այս պահի պատմականութիւնը: Պատմականութիւնն այն չէ, որ Ազգային ժողովը լուծարուում է եւ մենք ունենալու ենք առաջին անգամ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ մեր երկրում: Պատմականութիւնն այն է, որ Ապրիլ-Մայիսին տեղի ունեցած ոչ բռնի, թաւշեայ ժողովրդական յեղափոխութիւնից յետոյ մենք Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնը լիարժէքօրէն վերադարձնում ենք Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներին, եւ յետագայ քաղաքական գործընթացի ճակատագիրը որոշելու ամբողջ լիազօրութիւնը վերադարձնում ենք Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներին եւ ժողովրդին», - ըսած է Փաշինեանը:*

*Վարչապետի պաշտօնակատարը ընդգծած է, որ ի վիճակի պիտի ըլլան ապահովել ընտրութիւններու 100 տոկոսով օրինականութիւնը:*

*«Այսինքն՝ մենք այսօր երեկոյեան արդէն, կամ վաղն առաւօտեան ունենալու ենք մի իրավիճակ, երբ չունենք լիարժէք լիազօրութիւնների մէջ գտնուող Ազգային ժողով, չունենք կառավարութիւն, որովհետեւ պաշտօնակատար է կառավարութեան, եւ մենք ի վիճակի ենք լինելու ապահովել ընտրութիւնների 100 տոկոսով օրինականութիւնը եւ մենք բոլորս վստահ կը լինենք, որ ընտրութիւնների արդիւնքները ձեւաւորուել են ժողովրդի կամարտայայտման արդիւնքում», - ըսած է Փաշինեան:*

*Աւելի ուշ՝ լրագրողներու հետ զրոյցի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարած է որ արտահերթ խորհրդարանական ընտրութիւնները տեղի պիտի ունենան Դեկտեմբեր 9-ին:*

## ԼՈՒՐԵՐ

### Հայաստանը Համացանցի Ասպարէզի Մէջ Դասուած է «Ազատ Երկիր»




Freedom House իրաւապաշտպան կազմակերպութիւնը հրապարակած է «Համացանցի ազատութիւնը 2018 թուականին» զեկոյցը (Freedom on the Net 2018):

Յառաջխաղացում արձանագրած 19 երկրներէն Հայաստանը հապէս բարելաւած է դիրքը եւ «մասամբ ազատ»-էն տեղափոխուած է «ազատ» երկիրներու շարքը:

Freedom House-ի զեկոյցի հեղինակները նշած են, որ Հայաստանի պարագային բարելաւումը ուղղակիօրէն կապուած է «թաւշեայ յեղափոխութեան» հետ:

Հայաստանի քաղաքացիները յեղափոխութիւն կատարած են՝ աշխոյժօրէն կիրառելով ընկերային ցանցերու մեդիա հարթակները, հաղորդակցութեան յաւելուածները եւ համացանցով իրադարձութիւններու ուղիղ հեռարձակումները (live stream):

Հայաստանը համացանցի ազատութեան առումով աշխարհի մէջ գրաւած է 27-րդ տեղը: Տարածաշրջանէն իր առջեւ միայն Վրաստանն է, որ կը զբաղեցնէ 25-րդ տեղը: Ատրպէյճանը կը համարուի «մասամբ ազատ» եւ 60-րդ տեղը կը գրաւէ:

«Ոչ ազատ» երկիրներու շարքին 66-րդ տեղը կը զբաղեցնէ Թուրքիան, որուն կը յաջորդէ 67-րդ տեղը գրաւած ԵԱՏՄ, ԱՊՀ եւ ՀԱՊԿ կառոյցներու շոգեքարշ Ռուսաստանի Դաշնութիւնը:

Իրանը 85-րդն է: «Մասամբ ազատ» են Ղրղըզստանը եւ Ուքրանիան, «ոչ ազատ» են Ղազախստանը, Պելառուսը եւ Ուզպեքստանը:

Զեկոյցի հեղինակները ամփոփած են 2017 թուականի Յունիսէն 2018-ի Մայիս ընկած ժամանակաշրջանը՝ վերլուծելով համացանցի վիճակը 65 երկիրներու մէջ:

Այս տարուան զեկոյցին մէջ ընդգրկուած 65 պետութիւններէն 15-ը «ազատ» են, 30-ը՝ «մասամբ ազատ», եւ 20-ը՝ «ոչ ազատ»:

«Համացանցի ազատութիւնը 2018 թուականին» զեկոյցին մէջ ըսուած է, որ մեծ թիւով երկիրներու մէջ իշխանութիւնները կը խստացնեն հսկողութիւնը օգտատէրերու անձնական տուեալներու նկատմամբ:

Բացի այդ, իշխանութիւնները «կեղծ» (fake) տեղեկատուութեան դէմ պայքարի պատրուակով կը լռեցնեն այլախոհները, ինչը կը խարխլէ հանրութեան վստահութիւնը ոչ միայն համացանցի, այլեւ ընդհանրապէս ժողովրդավարութեան նկատմամբ:

### Հայաստանի Մէջ Գործարարութեամբ Զբաղուիլը Հեշտացած է

Համաշխարհային դրամատան «Գործարարութիւն 2019» զեկոյցի համաձայն պիզնեսի դիւրինութեան կամ այսպէս կոչուած «Doing business»-ի ցուցանիշով Հայաստանը 41-րդն է ուսումնասիրուած 190 երկրներու շարքին: Նախորդ զեկոյցին մէջ, ի դէպ, Հայաստանը 47-րդն էր:

Յատկանշական է, որ զեկոյցին մէջ ընդգրկուած են մինչեւ տուեալ տարուան մայիս ամիսը տեղի ունեցած փոփոխութիւնները, հետեւաբար դիրքի բարելաւումը Հայաստանի նախորդ իշխանութիւններու աշխատանքի արդիւնքն է եւ կապ չունի յեղափոխութեան հետ:

Միաժամանակ, Համաշխարհային դրամատունը փոխած է 2019-ի համար Հայաստանի տնտեսական աճի կանխատեսումները՝ նախորդ 4-ի փոխարէն ակնկալելով 4.3 տոկոսի աճ: ՀՊ Հայաստանի գրասենեակի տնօրէն Սիլվի Պոսուլթղոն կը կարծէ, երկիրը թէեւ անցումային փուլի մէջ է այժմ, բայց նոր կառավարութենէն դրական ուղերձներ կը ստանան:

«Տնտեսական աճը գերազանցեց մեր սպասումները, այն պայմանաւորուած է արտահանման՝ կանխատեսուածէն բարձր ցուցանիշով, վարկաւորման աճով, դրամական փոխանցումներով, ներդրումներով: Իհարկէ պէտք է հետեւինք զարգացումներուն, բայց ուղերձները, որոնք կը լսենք, բոլորն ալ դրական են, ինչպէս պիզնեսի, շուկաներու ազատականացում ու խաղի հաւասար պայմաններու ստեղծումն է», - հրաւիրած ասուլիսի ժամանակ նշած է Պոսուլթղոն:

Պիզնեսը կանխատեսելիութիւն կը սիրէ, շեշտած է Համաշխարհային պանքի ներկայացուցիչն ու յոյս յայտնած, որ յառաջիկային կառավարութեան կողմէ այս հարցին վերաբերեալ գործօն քայլեր կը տեսնէ:

Գործարար Սամսոն Գրիգորեանի համար ամենատեսանելի փոփոխութիւնը վերջին ամիսներուն արձանագրուած էզ ըսած է՝ կաշառակերութիւնը զգալիօրէն նուազած է:

«Ինչ վերաբերում է կաշառակերութեան վերացման հետ կապուած գործարարի աւելի վստահ աշխատանքին՝ դա, միանշանակ, կայ: Գործարարը համոզուած է, որ իր գլխին ինչ որ մի բան չի սարքուելու հիմա», - «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է ան:

Տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարարի պաշտօնակատար Տիգրան Խաչատրեանի հաւաստմամբ, կառավարութեան հեռանկարային ծրագիրն է պիզնեսի դիւրինութեան աստիճանին վրայ յայտնուիլ լաւագոյն տասնեակի շարքին:

www.massispost.com

### Վախճանած է Ողիմպիական Խաղերու Ախոյեան Եուրի Վարդանեանը

Մահացած է Ողիմպիական խաղերու ախոյեան, աշխարհի ցուցանիշակիր, ծանրորդ Եուրի Վարդանեանը: Այդ մասին կը տեղեկացնէ «Արմէնփրես»-ը, վկայակոչելով Սփորթի եւ երիտասարդութեան հարցերու նախարարութիւնը:

Մահուան պատճառները դեռ յայտնի չեն: Վարդանեանը կ'ապրէր ԱՄՆ-ի մէջ:

Եուրի Վարդանեանը ծնած է 13 Յունիս 1956-ին: 1977-ին ստացած է ԽՍՀՄ սփորթի վաստակաւոր վարպետի կոչում:

1977-1979, 1980-1981, 1983, 1985 թուականներուն ան դարձած է աշխարհի ախոյեան եւ գաւաթակիր: 1980 թուականին՝ ողիմպիական ախոյեան: 1977-1978, 1980-1981, 1983 թուականներուն՝ Եւրոպայի ախոյեան եւ գաւաթակիր: 1977, 1979, 1981 թուականներուն՝ ԽՍՀՄ ախոյեան եւ 1976 թուականին գաւաթակիր: 1978-1981 թուականներուն ճանչցուած է աշխարհի լաւագոյն ծանրորդ: 1985 թուականին սահմանած է աշխարհի 43 ցուցանիշ: 1980 թուականին միջին քաշի մէջ առաջինը երկամարտի ցուցանիշը հասցուցած է 400 քկ-ի:



Ողիմպիական խաղերու ախոյեան Եուրի Վարդանեան

2009 թուականին նշանակուած է Հայաստանի նախագահի խորհրդական: 8 Մայիս 2013-ին ազատուած է նախագահի խորհրդականի պաշտօնէն եւ նշանակուած Սփորթի եւ երիտասարդութեան հարցերու նախարար: 24 Յունիս 2014-էն մինչեւ 2017 թուականը զբաղեցուցած է Վրաստանի մէջ Հայաստանի դեսպանի պաշտօնը:

### Ալիեւը Կրկին կը Խօսի ԼՂ Հիմնախնդիրը Պատերազմով Կարգաւորելու Մասին

Ատրպէյճանի նախագահը վերստին յայտարարած է ռազմական ներուժը հզօրացնելու եւ ղարաբաղեան խնդիրը ցանկացած, այդ շարքին՝ պատերազմով կարգաւորելու պատրաստակամութեան մասին:

«Մենք ոչ մէկ տարբերակ չենք բացառեր», - Աղտամի շրջանին մէջ յայտարարած է Իլհամ Ալիեւը: - «Մենք այսուհետ եւս պիտի զարգացնենք մեր ռազմական հնարաւորութիւնները, եւ կը կարծեմ, որ այդ բանակցութիւններու կարեւորագոյն գործօններէն է, քանի որ, ցաւօք, միջազգային իրաւունքի չափանիշերը լիովին կ'անտեսուին: Մենք պիտի հասնինք մեր ուզած արդիւնքին, մենք կը պահանջենք, որ մեր պատմական հողերը ազատագրուին գրաւումէն, եւ այդպէս ալ պիտի ըլլայ»:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ սեպտեմբերին Տուշանպէի մէջ ունեցած կարճատեւ զրոյցէն ետք, որու ընթացքին կողմերը պայմանաւորուած էին նուազեցնել լարուածութիւնը շփման գիծին եւ ուղիղ կապ հաստատել, Ատրպէյճանի ղեկավարութիւնը կը խուսափէր ռազմատենչ յայտարարութիւններէ:

5 Նոյեմբերին սակայն, Իլհամ Ալիեւը վերստին պնդած է, թէ Պաքուն պատրաստ է ղարաբաղեան խնդրի կարգաւորման ցանկացած տարբերակի. - «Յոյսով եմ, որ Հայաստանի իշխանութիւնը, ճիշդ վերլուծելով տարածաշրջանին մէջ ստեղծուած իրադրութիւնը, ամենամօտ ժամանակին դուրս կը բերէ իր զօրքերը մեր հողերէն: Հակառակ պարագային հնարաւոր է կարգաւորման ցանկացած տարբերակ, մենք պատրաստ ենք ցանկացած լուծման: Ես բազմիցս նշած եմ, հիմա ալ կը կրկնեմ՝ մենք ապագային եւս պիտի մեկուսացնենք Հայաստանը բոլոր տարածաշրջանային նախագիծերէն եւ, օգտագործելով բոլոր միջոցները, պիտի վերականգնենք մեր տարածքային ամբողջականութիւնը»:

Հայաստանի նոր ղեկավարութեան հետ դէմ առ դէմ հանդիպման հնարաւորութեան մասին Ալի-ը չի խօսել, բայց պնդել է, թէ «Հայաստանի նոր իշխանութիւնները չպետք է կրկնեն նախորդ վարչակազմի սխալները»:

«Անոնք պէտք է բանակցութիւններրու միջոցով դուրս բերեն զօրքերը գրաւեալ տարածքներէն եւ հնարաւորութիւն տան Ատրպէյճանի քաղաքացիներուն վերադառնալ իրենց հարազատ ու պատմական բնակավայրերը», - ըսած է Ալիեւը՝ աւելցնելով. - «Որքան շուտ անոնք կը հասկնան սա, այդքան լաւ իրենց համար ու տարածաշրջանին համար: Ես մէկ անգամ կ'ուզեմ ըսել՝ մենք մտադիր չենք համակերպուելու այս իրավիճակի հետ», -ըսած է Ալիեւ:

### Հայաստանի Մշտական Բնակչութիւնը 2 Միլիոն 969.2 Հազար է

Այս տարուան 1 Հոկտեմբերի դրութեամբ Հայաստանի մշտական բնակչութեան թուաքանակը կազմած է 2 միլիոն 969.2 հազար մարդ: Վիճակագրական կոմիտէի հրապարակած տեղեկատուութեան համաձայն՝ քաղաքային բնակչութեան թիւը եղած է 1 միլիոն 895.4 հազար, գիւղականը՝ 1 միլիոն 073.8 հազար մարդ: Երեւանի մշտական բնակչութեան թիւը կազմած է 1 միլիոն 079.4 հազար:

Պետական վիճակագրութիւնը կը փաստէ, որ Հայաստանի մշտական բնակչութեան թիւը վերջին ամիսներուն նուազման միտում դրսեւորած է: Այսպէս, 1 յուլիսի դրութեամբ մշտական բնակչութեան թիւը կազմած էր 2 միլիոն 969.8 հազար մարդ: Իսկ տարեսկիզբին՝ 1 յունուարի դրութեամբ մշտական բնակչութեան թիւը 2 միլիոն 972.7 հազար էր:

## Գերմանիոյ Մէջ Բացայայտուած է Հայկական Մաֆիոզ Խմբաւորումներու Ցանց




Ըստ գերմանական հեղինակաւոր «Շփիկըլ» պարբերականի եւ Mitteldeutscher Rundfunk հանրային հեռուստառադիոընկերութեան համատեղ հետաքննութեան, Գերմանիոյ դաշնային ոստիկանութիւնը շուրջ երեք տարի հետաքննութիւն վարած է հայկական մաֆիայի անդամները ձերբակալելու ուղղութեամբ, կասկածներ ունեցած է նոյնիսկ երկրի մէջ Հայաստանի դեսպան Աշոտ Սմբատեանի վերաբերեալ:

Ըստ այդ հրապարակումներուն, հայկական մաֆիոզ խումբերը բացայայտելու համար վերջին տարիներուն Գերմանիոյ ոստիկանութեան կողմէ յատուկ գործողութիւն մշակուած է:

Տարիներ շարունակուած քննութեան հետեւանքով իրաւապահները արձանագրած են, որ Գերմանիոյ մէջ հայկական մաֆիոզ խմբաւորումները խոր արմատներ դրած են ու հզօր ցանց ստեղծած, սակայն, կասկածեալները հնարաւոր չի եղած ձերբակալել՝ ապացոյցներու ու միջոցներու անբաւարարութեան պատճառով:

Ըստ գերմանացի լրագրողներուն, հայկական յանցաւոր խումբերը իրաւապահներու ուշադրութեան կեդրոնը յայտնուած են 2014-էն՝ Թիւրինկիա երկրամասի մայրաքաղաքին մէջ Էրֆուրթում խաղատան մօտ հայկական երկու յանցաւոր խումբերու միջեւ տեղի ունեցած փոխհրաձգութենէն ետք:

Իրաւապահները յարուցած էին 14 քրէական գործ, աւելի քան չորս տասնեակ մարդու դէմ քննութիւն սկսած, այդ շարքին՝ փողերու լուացման մեղադրանքով: Քննութեան աւարտին կազմուած խիստ գաղտնի զեկոյցը, այդուամենայնիւ, արձանագրած է, թէ Գերմանիոյ մէջ իսկապէս կը գործէ հայկական մաֆիա, որ ռուս-եւրասիական տարածաշրջանի միւս յանցաւոր խումբերուն հետ միասին կը տիրապետէ էական նիւթական միջոցներու՝ սպառնալով երկրի մէջ օրէնքի գերակայութեան:

Ընդ որում, գերմանական հեղինակաւոր լրատուամիջոցները նշած են, որ ամիսներ առաջ՝ այս տարուան Մարտին, Գերմանիոյ մէջ Հայաստանի դեսպան Աշոտ Սմբատեանը հանդիպած է Թիւրինկիա երկրամասի ոստիկանապետին ու առաջարկած պաշտօնական Երեւանի աջակցութիւնը հայկական յանցաւոր խումբերը բացայայտելու հարցի վերաբերեալ: Գերմանիոյ դաշնային քրէական ոստիկանութիւնը, սակայն, գաղտնի շրջաբերականով գործընկերներուն խորհուրդ տուած է վերջինիս հետ չհամագործակցիլ:

«Դրա մասին խօսք անգամ չի կարող լինել՝ մաֆիոզ խմբաւորումներու եւ Հայաստանի իշխանութիւնների հնարաւոր սերտաճման պատճառով», - ըստ «Շփիկըլի», ըսուած է գաղտնի այդ փաստաթուղթին մէջ:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը, «Ազատութեան» հարցման ի պատասխան տեղեկացուցած է, թէ կապի մէջ է գերմանական պատկան մարմիններու հետ՝ մամուլի մէջ յայտնուած լուրերու արժանահաւատութիւնը ճշդելու համար:

«Հաշուի առնելով հարցի նրբութիւնը՝ ներկայիս նպատակայարմար չենք գտնում լրացուցիչ մեկնաբա-նութիւն տալ: Յաւելեալ տեղե-կութիւն կը յայտնենք ըստ արդիւնքների», - նշած է Աննա Նաղդալեանը:

## Լուկաշէնքօ. Պելառուսիան կը Շարունակէ Մնայ Երեւանի Վստահելի Բարեկամը

«Պելառուսիան շարունակելու է զարգացնել յարաբերութիւնները Հայաստանի հետ թէ՛ քաղաքական եւ թէ՛ տնտեսական ասպարէզներում», - Երեքշաբթի օր Մինսկի մէջ Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանի հետ հանդիպման ժամանակ յայտարարեց Պելռուսիոյ ղեկավար Ալեքսանդր Լուկաշենկոն:

«Ջնայած ժողովրդավարական Հայաստանում հնչող տարատեսակ դատողութիւններին, Պելառուսը միշտ եղել եւ մնում է ձեր լաւ եւ վստահելի բարեկամը: Մենք աշխատում ենք միասնական տնտեսական տարածքում՝ մեր Եւրասիական Միութիւնում նաեւ ռազմաքաղաքական միութեան՝ ՀԱՊԿ շրջանակներում: Եւ ինչ էլ ասեն կամ գրեն, միեւնոյն է՝ մենք սրբօրէն կատարում ենք մեր պայմանաւորուածութիւնները, այն ամէնը, ինչ նախատեսուած է այդ կազմակերպութիւնների շրջանակներում», - յայտարարած է Լուկաշենկոն:

Վերջին մէկ տարուան ընթացքին սակայն, պաշտօնական Մինսկը զգալիօրէն աշխուժացուցած է ռազմաքաղաքական համագործակցութիւնը Եւրասիական Միութեան եւ ՀԱՊԿ անդամ չհանդիսացող Ատրպէյճանի հետ: Այդ գործակցութեան ամենավառ ապացոյցը դարձաւ պելառուսական արտադրութեան «Պոլոնէզ» հրթիռային համակարգերու վաճառքի շուրջ Ատրպէյճանի հետ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնը: Անցնող ամրան ընթացքին, երբ Երեւանի մէջ ըժգոհութիւններ հնչեցին «Պոլոնեզներու» վաճառքի կապակցութեամբ, պելառուս փորձագէտները կը նշէին, թէ ֆինանսական շահը Մինսկին անհամեմատ աւելի շատ կը հետաքրքրէ, քան դաշնակցային յարաբերութիւններու զարգա-ցումը:

Ուշագրաւ է, որ Ալեքսանդր Լուկաշենկոն, Հայաստանի նախագահի հետ հանդիպման ժամանակ, ընդգծած է, թէ որքան կարեւոր են անվտանգութեան խնդիրները Հայաստանի եւ հայերի համար: Անվտանգութեան խնդիր-ներու լիշատակումը եւս պատահական չէր, քանի որ ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանը Մինսկ ժամանած էր եւրոպական ամենահեղինակաւոր համաժողովներէն մէկուն՝ «Մինէնխի անվտանգութեան ֆորումի» կազմակերպած համաժողովին մասնակցելու նպատակով:

Հանդիպման ընթացքին Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանը բաւական բարձր գնահատած էր պաշտօնական Մինսկի վարած քաղաքականութիւնը՝ պնդելով, որ իր մօտեցման նման կը մօտենան միջազգային հանրութեան շարք մը ներկայա-ցուցիչներ:

## Արաբական Աշխարհ

## Արաբ Արտաքին Գործոց Նախարարներու Հերթական Ժողովը

Քուէյթի փոխ արտաքին գործոց նախարար Խալէտ էլ Ժարալլահ հաստատեց թէ արաբական Ծոցի Երկիրներու եւ ԱՄՆի գագաթի ժողովը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Յունուարին, նախատեսուած ժամանակին:

Այս կապակցութեամբ յառա-ջիկայ օրերուն, Ծոցի Նախարարաց յանձնախումբը իր նախապատ-րաստական ժողովը պիտի գումարէ: Ծոցի երկիրներու համագոր-ծակցութեան յանձնախումբը, իր այս ամսուան ժողովի ընթացքին պիտի քննարկէ նախորդ գագաթի ժողովի ընթացքին առնուած որոշումներու գործադրութեան հոլովոյթը:

## 8 Միլիոն Եգիպտացիներու Վերաբնակութիւնը Սինայի Անապատին Մէջ

Եգիպտական կառավարու-թիւնը յայտարարեց թէ կը ծրագրէ 8 միլիոն եգիպտացիներ պիտի վերաբնակեցնէ Սինայի անապատի շրջանին մէջ: Այս կապակցութեամբ Եգիպտոսի վարչապետ Տօքթ. Մուսթաֆա Մատպուլին ըսաւ որ իր կառավարութիւնը ռազմա-վարական նպատակներով եւ շրջանի բարգաւաճման նպաստելու առա-ջադրանքներով 8 միլիոն եգիպտա-ցիներ պիտի վերաբնակեցնէ Սինայի մէջ:

ՄԱԿ-ի մօտ արաբական երկիրներու զարգացման եւ բարգաւաճման գծով ընդհանուր քարտուղարի օգնական Տօքթ. Մուրատ Ուէհպի նշեց թէ հիւսիսային Սինայի շրջանին մէջ բազմաթիւ հնարաւորութիւննպր գոյութիւն ունին, ճարտարար-ուեստի, ձկնորսութեան, երկրագոր-ծութեան եւ զբօսաշրջութեան բնագաւառներուն մէջ:

Եգիպտոսի վարչապետին համաձայն ներկայիս բանակ-ցութիւններ կը տարուին միջազ-գային դրամատան հետ, ապահովելու համար այս հսկայական ծրագրի իրագործումը:

## Կաշառակերութիւնը Լիբանանի Մէջ

Լիբանանի քաղաքական շրջանակները ներկայիս մեծապէս մտահոգուած են երկրի տնտեսական եւ կանխիկ դրամական շրջանա-ռութեան իրավիճակով: Սկսած են կաշառակերութիւնը կասեցնելու միջոցներու մասին մտածել, վերջ տալու համար կաշառակերութեան եւ տիրող քայքայիչ ու ապականիչ իրավի-ճակին:

Այս առնչութեամբ իր կարծիքն արտայայտեց տնտեսագէտ Տօքթ. Լուիս Հօպէյքան: Ան «Լայֆ» երթին տուած հարցազրոյցի մը ընթացքին յատկապէս ընդգեց որ Լիբանան երկար ատենէ ի վեր կը նկատուի աշխարհի առաջատար երկիրներէն ուր տիրապետողն է կաշառակերութիւնն ու ապականած իրավիճակը: Այս բոլորի պատասխանատուն Ով կրնայ ըլլալ: Ըստ Հուպէյքայի գլխաւոր պատասխանատուն նոյնինքն Լիբանանի ժողովուրդն է, որ արտօնած է իրերու այս դրութեան շարունակութիւնը ընտրու-թիւններու պարունակին մէջ: Քաղաքացին շատ լաւ գիտէ թէ ով է կաշառակերն ու մաֆիայի գործակալը եւ այս քաղաքացին է որ կը քաջալերէ կաշառա-կերութիւնը:

Երկրորդ՝ կառավարութիւնն ալ իր բաժինը ունի, քանի որ երկրի գլխաւոր կառոյցներուն վրայ, այնպիսի մարդիկ կը նշանակէ որոնք այդ մարզերու մէջ պատախանատու մասնագէտներ չեն:

Նմանապէս Երեսփոխանական ժողովն ալ իր պատասխա-նատութիւթիւնն ունի, երբ լիբանանցիներու կողմէ իրենք ընտրուած են շահադիտական բացայայտ նկատումներով: Այսպի-սիներն են որ կառավարութեան վստահութիւն կուտան, որ ի վիճակի չէ առաջքն առնելու կաշառա-կերոթեան:

Հօպէգյքան աւելցուց «Կաշառակերութեան դէմ սկսուած արշաւին առընթեր լիբանանեան պատկան մարմիններն ի վիճակի չեն վերջնականօրէն առաջքն առնելու անոր: Ընդհակառակը կաշառակերութիւնը կը քաջալեր-ուի տակաւին քաղաքագէտներու կողմէ:

Այն հարցումին թէ ինչպէ՞ս կարելի է վերջ տալ տարբեր կառոյցներէն ներս տիրապետող կաշառակերութեան՝ Հոպէյքայի պատասխանը եղաւ հետեւեալը. «Հարցի լուծումը կը կայանայ այն բանին մէջ որ լիբանանցի ժողովուրդը ինքը համոզուած պէտք է ըլլայ կաշառակերութեան դէմ պայքար մղելու անհրաժեշ-տութեան»:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# Լոնտոնի Մէջ Ցուցադրուած է Հնչակեան Գործիչ Փարամազի Մասին Տեսաֆիլմը




Լոնտոնի մէջ տեղի ունեցած է Թուրք գրող, հրապարակախօս Քատիր Աքընի պատրաստած Հայոց ցեղասպանութեան եւ Հնչակեան կուսակցութեան յայտնի գործիչներէն Փարամազի (Մատթէոս Սարգսեան) վերաբերեալ «RED» վաւերագրական ֆիլմի ցուցադրութիւնը:

Աղբիւրի փոխանցմամբ՝ միջոցառումը կազմակերպուած է «Թրքական եւ քրտական համայնքի համերաշխութեան կեդրոն»ի կողմէն, որու ժամանակ Աքընը նաեւ իր գիրքերը մակագրած է:

Մասնակիցներէն գրող Այտըն Զուպուքչուն ելոյթի ժամանակ նշած է, որ ծայրաստիճան կարեւոր է, որ այս տեսակ ճշմարտութիւնները ջուրի երես դուրս գան եւ աւելցուցած, որ Աքընի կատարած աշխատանքը նոյնպէս կարեւոր փաստաթղթի դեր կը կատարէ:

Ֆիլմի դիտումէն ետք հեղինակ Աքըն անդրադառնալով 1915-ի Պոլսոյ Պէյազէթ հրապարակին մէջ Փարամազի եւ 19 յեղափոխական գործիչներու կախաղան բարձրացուելուն, շեշտած է, որ պէտք չէ ստուերել պատմութեան էջերը:

Աքընի փոխանցմամբ՝ ան նաեւ ուսումնասիրութիւններ կատարած է հայ կանանց շարժման վերաբերեալ:

Հեղինակի կարծիքով՝ մեծ խիզախութիւն կը պահանջուի խօսելու համար հայերու նկատմամբ կիրառուած ճնշումներու եւ ցեղասպանութեան քաղաքականութեան մասին:

Աքըն պատմած է, երբ հետազօտութիւններու ընթացքին իրեն հարցուցած են, «հայ է, թէ? ոչ կամ հայ ես, կամ ալ կը թաքցնես, որ հայ ես». այս ամէնը կ՛ապացուցէ, թէ ինչքան ծանր եղած են հայերու նկատմամբ ճնշումները:

Փարամազը ծնած է Մեղրիի մէջ: Սորված է Էջմիածնի Գէորգեան ճեմարանէն ներս( 1878-1883): 1884 թուականէն զբաղուած է ուսուցչութեամբ: 1897 -ին իր ստեղծած ֆիտայիներու խումբով անցած է Վան, սակայն ձերբակալուած է եւ դատապարտուած մահուան: Բայց Վանի ռուսական փոխհիւպատոսի միջնորդութեամբ ազատուած է կալանքէն եւ ուղարկուած Կովկաս: 1908-ի երիտթուրքերու յեղաշրջումէն ետք անցած է Թուրքիա, քարոզած Օսմանեան սուլթանութեան մէջ ապրող ժողովուրդներու միջեւ բարեկամութիւն հաստատելու գաղափարը:




Փարամազը եւ 19 ականաւոր հնչակեան գործիչներ 1915 թուականի 15 յունիսին Կ.Պոլսոյ Պեյազէթ հրապարակին վրայ կախաղան բարձրացուած են: Անոնք իրենց կեանքը նուիրած էին հայերու ազատագրական պայքարին, իսկ 1913-ի սեպտեմբերին Ռումինիոյ մէջ կայացած Հնչակեան կուսակցութեան համագումարի ժամանակ վճռած էին սպանել Ատանայի կոտորածներու հեղինակ երիտթուրքական պարագլուխները:

Աղբիւրը՝ Էրմենիհապեր

# Հայասէր Թուրք Լրագրող Սերտար Քորուճու Փախստական Դարձած Հալէպահայերու Մասին Գիրք Գրած է






Թուրքիոյ մէջ հրատարակուած է սուրիական հակամարտութեան տարիներուն հայկական սփիւռքի մայր համայնքի՝ հալէպահայութեան վերապրածներու մասին թրքերէն գիրք, այն լոյս ընծայած է Պոլսոյ մէջ գործող հայկական «Արաս» հրատարակչութիւնը: Այս մասին կը գրէ «Tert.am»ը:

Գիրքի հեղինակ Թուրք լրագրող, CNN Turk-ի խմբագիրներէն ու «Ակօս» հայկական պարբերականի նախկին լրագրողներէն Սերտար Քորուճուն 2013 թուականէն սկսեալ նախագիծի շրջանակէն ներս գրուցած է Հալէպը հարկադրաբար լքած սուրիահայերուն հետ՝ Թուրքիոյ, Հայաստանի ու Արցախի մէջ: Գիրքին մէջ խօսելով անոնց վերապրած դժվարութիւններու, ցեղաս-պանութիւն վերապրած հայերու ժառանգները ըլլալով հանդերձ պատմութեան մէջ երկրորդ անգամ փախստական դառնալու ճակատագրի, ապագայի հեռանկարներու, երազանքներու ու նպատակներու շուրջ:

Գիրքի թրքերէն «Հալէպ՛սիզլեր» վերնագիրը կարելի է կարդալ երկու կերպով՝ «Առանց Հալէպի մնացածները» կամ «Հալէպը դուք էք»: Աշխատութիւնը Պոլսոյ մէջ արդէն վաճառքի հանուած է:

Շար.ը էջ 15

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 * $100,00 (first class) for USA
$ 125,00 (Air Mail) for Canada.
$ 250,00 (Air Mail) Overseas.
Name: ----------------------------------------------
Address: ----------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: --------------
Tel :------------------------ Email: --------------------------

ARMENIAN COUNCIL OF AMERICA
Legal Aid

SATURDAY NOVEMBER
17, 2018
2-5PM
NORTH VALLEY CITY HALL, 7747
FOOTHILL BLVD, TUJUNGA, CA 91042

ISSUES:
EMPLOYMENT
LANDLORD/TENANT
BANKRUPTCY
CRIMINAL
IMMIGRATION
DIVORCE
CUSTODY AND CHILD SUPPORT
PERSONAL INJURY
BUSINESSES AND CONTRACTS

THE CLINIC IS OPEN TO ALL REGARDLESS OF THEIR IMMIGRATION STATUS

HELP IS AVAILABLE IN ENGLISH, ARMENIAN, AND SPANISH

ALL CONSULTATIONS WILL BE ON A FIRST COME FIRST SERVE BASIS ON ISSUES

THE ARMENIAN COUNCIL OF AMERICA LEGAL AID INITIATIVE STRIVES TO ADVOCATE FOR THE RIGHTS OF THE UNDER-SERVED AND PROVIDES ACCESS TO THE LAW.
THOUSANDS ARE UN-AWARE OF THE OPPORTUNITIES FOR ADEQUATE LEGAL ASSISTANCE.
OUR ATTORNEY VOLUNTEERS WORK WITH OUR LEGAL AID PARTNERS TO BETTER SERVE OUR VIBRANT AND DIVERSE COMMUNITY.

MONICA RODRIGUEZ
L.A. CITY COUNCILWOMAN
ARMENIAN COUNCIL OF AMERICA

QUESTIONS? CONTACT LEGALAID@ARMENIANCOUNCIL.ORG

# Հ.Բ.Ը.Մ.-ը Կը Պատուէ Հէնրիխ Մխիթարեանը Լոնտոնի Մէջ ԹՈՒՄՈ X Հ.Բ.Ը.Մ Կեդրոններու Ի Նպաստ Կազմակերպուած Կալա Ձեռնարկի Ընթացքին




Աշխարհի տարբեր կողմերէն եկած հիւրերու շարքին, ձեռնարկին ներկայ էր նաեւ ոտնագնդակի Ֆրանսահայ աշխարհահռչակ աստղ՝ Եուրի Ճորքայէֆ

*Մինչ Արսենալ Ակումբի կիսապաշտպան Հէնրիխ Մխիթարեանի երկրպագուները միշտ խուռներամ ներկայ կը գտնուին մարզադաշտէն ներս տեղի ունեցող իր մրցումներուն, անդին բազմահազար հայեր նոյնպէս, հեռատեսիլի միջոցաւ, ակնդէտ կը հետեւին իրենց սիրելի աստղին խաղերուն: Նոյեմբեր 3-ին, Մխիթարեանի երկրպագուներ եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (Հ.Բ.Ը.Մ.) բարեկամներ, հաւաքուած էին Լոնտոնի Տհը Տորչէսթըր պանդոկին մէջ, տօնախմբելու համար Հէնրիխի ֆութպոլային նուաճումները, աւելին, երախտագիտութիւն յայտնելու անոր, իր մարդասիրական նախաձեռնութիւններուն համար, որոնք նիւթական միջոցներ ապահոված էին ԹՈՒՄՈ X Հ.Բ.Ը.Մ երկու կեդրոններու ի նպաստ:*



*Մխիթարեան ծնած է 1989-ին, Երեւան եւ մանուկ հասակէն միշտ երազած է ֆութպոլ խաղալ: Ֆութպոլի նկատմամբ իր սէրը կազմաւորուած է իր հօր, Համլէթ Մխիթարեանի պատճառով, որ 1980-ական թուականներուն եղած է անդամ առաջնակարգ տեղական թէ Ազգային ֆութպոլի խումբերու եւ որուն բոլոր խաղերը դիտած է ան: 17 տարեկանին, Հայաստանի մէջ երէցներու ակումբի մը մէջ խաղալ սկսելով, չորս տարի չանցած, ան արդէն հասած էր միջազգային արհեստավարժ մակարդակի: Շնորհիւ իր անձնական կարգապահութեան, ուշիմութեան եւ տաղանդին, ան համաձայնագրեր ստորագրած է Պորուսիա Տորթմունտ եւ Մէնչեսթըր Եունայթըտ խումբերուն հետ: Ներկայիս արդէն որպէս երիտասարդութեան կուռք, ան կը խանդավառէ եւ հպարտութիւն կը ներշնչէ բազմահազար հայ մանուկներու եւ երիտասարդներու, իր օրինակելի վարքով, աշխուժութեամբ եւ հայրենասիրութեամբ: Իր արհեստավարժ կեանքի առաջին իսկ օրերէն ներգրաւուած ըլլալով մարդասիրական ծրագիրներու մէջ, ան 2016-ին Բարեսիրական Դեսպան նշանակուեցաւ Հայաստանի մէջ ԵՈՒՆԻՍԷՖ-ի (Միացեալ Ազգերու Մանուկներու Ֆոնտ) եւ ցարդ ջերմեռանդութեամբ կը գործէ այդ կազմակերպութեան հետ, կրթութեան եւ մարզական բնագաւառներու մէջ մանուկներու իրաւունքներու պաշտպանութեան եւ անոնց համար առիթներ ապահովելու ուղղութեամբ:*

*Կալա երեկոյթի ամբողջ տեւողութեան ուրախ եւ հաճելի մթնոլորտ կը տիրէր: Օրուան հանդիսավարն էր Քամիլլիօ Ազզուզ, որ ջերմօրէն բարիգալուստ մաղթեց հիւրերուն, որոնց շարքին էր ֆրանսահայ ֆութպոլի աստղ Եուրի Ճորքայէֆ: Ազզուզ, անդամ է Հ.Բ.Ը.Մ.ի Լանտըն Թրասթ-ի հոգաբարձական կազմին: Ան իր խօսքին մէջ շեշտեց Հ.Բ.Ը.Մ.ի օժանդակութիւններուն եւ գործակցութեան արդիւնաւէտութիւնը բազմաթիւ կարեւոր եւ կենսական նախաձեռնութիւններու, որոնց շարքին՝ ԹՈՒՄՈ X Հ.Բ.Ը.Մ կեդրոններու ծրագիրը: Յատկապէս այդ ծրագրի գոյառումին քաջալեր հանդիսացած եւ աջակցած էր Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ եւ Էմպըր Քէփիթալ ի գլխաւոր գործադիր տնօրէն Ժոզէֆ Ուղուրլեան, սատարելով նաեւ ԹՈՒՄՈ Ստեղծարարար Ճարտարարուեստի կեդրոններու տարածումին:*

*Իր խօսքին մէջ Ժոզէֆ Ուղուրլեան մատնանշեց, թէ երեկոն առիթ կը հանդիսանար լուսարձակի տակ բերելու Հ.Բ.Ը.Մ.-ի եւ ԹՈՒՄՈ-ի գործունէութիւնը, ինչպէս նաեւ շեշտելու Հայկական ազգային ինքնութեան համար բնորոշիչ հանդիսացած իրադարձութիւններ: «Երբ կ՚ապրէինք Ֆրանսայի մէջ, մեզի համար հպարտութեան բաբախուն պահեր էին 1998-ի Ֆութպոլի Միջազգային Դաշնութեան աշխարհի ախոյանութեան բաժակի աւարտական խաղերուն՝ Ֆրանսայի Ազգային Հաւաքականի եւ Եուրիի խաղարկութիւնը եւ իրագործած յաղթանակը: Եուրիի տաղանդին միջոցաւ, Հայութիւնը յայտնուեցաւ համաշխարհային ֆութպոլի շրջանակներէն ներս: Հիմա, անգամ մը եւս, մենք ուրախութեամբ կը ճառագայթենք, ամէն անգամ որ Մխիթարեան կը յայտնուի մարզադաշտէն ներս, եւ ժողովուրդը խելայեղ կը վանկարկէ իր անունը: Մխիթարեան՝ ֆութպոլի աշխարհը եւ իր միլիոնաւոր երկրպագուները իրազեկ դարձուց Հայաստանի իրականութեան: Ճորքայէֆի եւ Մխիթարեանի յաջողութիւնը մեր յաջողութիւնն է, որովհետեւ երբ մեզմէ որեւէ մէկը կը յաջողի, մենք բոլորս կը յաջողինք»: Ասիկա երրորդ անգամն էր, որ Ժոզէֆ Ուղուրլեան եւ իր ազնիւ տիկինը Ժէննին, լայնասրտօրէն կը հիւրընկալէին Հ.Բ.Ը.Մ.-ի Լոնտոնի Կալա-ն:*

*Անշուշտ երեկոյի ամենախանդավառ պահը նոյնինքն Մխիթարեանի ժամանումն էր, երբ ան Արսէնալի խումբի մրցումէն անմիջապէս ետք, որուն մասնակցած էր, կը հասնէր եւ կը բարձրանար բեմ, ստանալու համար Հ.Բ.Ը.Մ.-ի Համաշխարհային Գերազանցութեան Մրցանակ-ը: Խօսք առնելով ան ըսաւ. «Ես կը փափաքիմ շնորհակալութիւն յայտնել Հ.Բ.Ը.Մ.-ին, որ զիս հրաւիրեց մասնակցելու երիտասարդներու կրթութեան սատարելու նպատակով կազմակերպուած այս ձեռնարկին: Կ՚ուզեմ նաեւ շնորհակալութիւն յայտնել Եուրիին, որ ինծի համար տիպար օրինակ հանդիսացաւ, երբ ես պատանի տարիքիս կ՚երազէի արհեստավարժ ֆութպոլիսթ դառնալ: Մենք պէտք է խանդավառենք մեր երիտասարդութիւնը եւ աշխատինք անոնց համար կեանքի առիթներ ստեղծել, որպէսզի անոնք հասնին իրենց նպատակներուն: Ես խորապէս երախտապարտ կը զգամ ԵՈՒՆԻՍԷՖ-ի, Հ.Բ.Ը.Մ.-ի եւ ԹՈՒՄՈ-ի նման կազմակերպութիւններու կատարած գործին համար»:*

*2015-ին գոյութիւն առած*

Շար.ը էջ 13




**www.massisweekly.com**
**Updated Every Friday**

## Յոբելեար «Ասպարէզ» Օրաթերթի 110 Ամեակի Նշման Մասին



Նորին Ս. Օծութիւնը Քալիֆորնիոյ հայ գաղութին փափաքը նկատի առած եւ 1917 Յունիս 20 թուակիր եւ 1090 համարաւ դիւանական պաշտօնագրով երեսփոխանական ժողովիս յանձնած էր խնդիրը բարոյական, վարչական եւ տնտեսական տեսակէտներէ ուսումնասիրել եւ արդիւնքը տեղեկագրել Ս. Էջմիածին՝ վերջնական տնօրինութեան համար: Միեւնոյն ժամանակ յանձնարարած էր, որ Քալիֆոռնիոյ կողմէն յատուկ պատգամաւոր մը ներկայ գտնուի երեսփոխանական ժողովոյդ նոյն նիստին եւ պարզէ առանձին առաջնորդութիւն մը հաստատելու պէտքերն ու անհրաժեշտութիւնը: Ֆրէզնոյի երեսփոխան եւ Քալիֆոռ-նիոյ մասնաւոր պատգամաւոր Տիար Վահան Քիւրքճեան խօսք առաւ եւ կարդաց այն ընդարձակ պաշտօ-նագիրը, որ Քալիֆոռնիոյ թեմերուն կողմէ ուղղուած էր Վեհ. Հայարեպատին: Յետոյ թուեց այն օգուտները, որ յառաջ պիտի գային առանձին առաջնորդութիւն մը հաստատումէն:

Ժողովը նկատի ունենալով Քալիֆորնիայի հայոց ընդհանուր բաղձանքը եւ առանձին առաջնորդութեան համար հարկ եղած բարոյական եւ նիւթական զոհողութեանց յանձնառութիւնները՝ ՄԻԱՁԱՅՆՈՒԹԵԱՄԲ ՀԱՄԱՄԻՏ ԳՏՆՈՒԵՑԱՒ, ՈՐ ՇՈՒՐՋ ԵՐԵՔ ՀԱԶԱՐ ՄՂՈՆ ՀԵՌԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԳՏՆՈՒՈՂ ՔԱԼԻՖՈՌՆԻՈՅ ԹԵՄԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱԶՄԵՆ եւ որոշեց ըստ այնմ տեղեկագրել Վեհ. Հայրապետին»:




*Ամենայն Հայոց կաթողիկոսի դիւանից հրապարակուած փաստաթղթերը յուշում են, որ Նորին Ս. Օծութիւնը դեռեւս 1917 թ. Փետրուարի 11-ին ստացել է զեկուցագիրը պատգամաւորութեան անունից, ապա ԱՄՆ հայոց առաջնորդ գեր. Տ. Արսէն Ծայր Վրդ.ի անունով կարգադրել հետեւեալը. (կարգադրութիւնը Ս. Էջմիածնի դիւանից մամուլում հրապարակել է Տիրայր եպս.-ը, որ այն ժամանակ դիւանապետն էր Ս. Աթոռում, որ նաեւ յետագայում փոխադրուեց ԱՄՆ եւ երկար տարիներ գործուն հոգեւորականներից մէկը եղաւ - Ն. Պ.):*

«20 Յունիսի 1917 ամի, ի Ս. Էջմիածին: Ամերիկայի Կեդրոնական վարչութեան կրօնական ժողովի նախագահ գեր. Տ. Արսէն Ծ. Վարդապետին: Գալիֆորնիոյ մէջ առանձին առանջնորդութիւն հաստատելու նկատմամբ կրօնական ժողովիդ տարւոյս Մարտ 3 թիւ 8-292 գրութիւնն, ինչպէս եւ Գալիֆորնիայի հայոց եկեղեցիների պատգամաւորական ժողովի Փետրուարի 11-ի հեռագիրն ստանալով հայրապետական դիւանս մանրամասն զեկոյց Նորին Սրբութեան խնդիրը: Նորին Վեհափառութիւնն ի նկատի առնելով յարուցուած խնդրի կարեւորութիւնը, որով Ամերի-կահայ հօտի կեանքի մէջ էական փոփոխութիւն է յառաջ բերում ըստ վարչական կազմութեան, բարեհաճեց կարգադրել այս նկատմամբ.

Ա. Յանձնարարել կրօնական ժողովիդ այս խնդիրն ամբողջութեամբ դնել Երեսփոխանական ժողովի սեղանի վրայ:

Բ. Քննութեան առնել խնդիրը իւր յարակից բոլոր պարագաներով, ըստ վարչականին, ըստ բարոյականին եւ ըստ տնտեսականին:

Գ. Երեսփոխանական ժողովի եզրակա-ցութիւնը Ձեր կարծիքի հետ ներկայացնել Նորին Ս. Օծութեան ի վերջնական տնօրինութիւն եւ ի հաստատութիւն:

Աչքի առաջ ունենալով խնդրի կարեւորութիւնը՝ Երեսփոխանական ժողովի քննութեան նիստին հրաւիրել նաեւ Գալիֆորնիայի հայ եկեղեցիների պատգամաւորների ներկայացուցիչներին՝ ի պաշտպանութիւն եւ ի բացատրութիւն յարուցուած խնդրի այլ եւ այլ պարագաների»:

*Հայրապետական հրահանգի համաձայն Գալիֆորնիայի պատգամաւորական ժողովը որոշում է ներկայացուցիչ ուղարկել Ս. Էջմիածին, առաջարկում է տիար Յ. Նշկեանին, սակայն նրա հրաժարուելուց յետոյ ընտրում է պ. Վահան Քիւրքճեանին, որ արդէն Ֆրեզնոյի երեսփոխանն էր: Պ. Քիւրքճեան ընդունում է այդ պաշտօնը, երեսփոխանական ժողովում ներկայացնում խնդիրը եւ արդիւնքը, որ դրական էր Գալիֆորնիայի հայ համայքի համար, յայտնում հետեւեալ ծանուցումով.*

«Նիւ Եորք, ապրիլ 10, 1918: Մեծ. Ս. Վ. Մելքոնեան, ատենապետ պատգամաւորական ժողովոյ հայ եկեղեցեաց Քալիֆորնիոյ, Ֆրէզնո:

Մեծ. Տէր Ատենապետ, իր ժամանակին ստացայ պատուարժան ժողովոյդ Մարտ 25 թուակիր նամակը, որով զիս պատգամաւոր կը կարգէիք վերջի երեսփոխանական ժողովոյ համար, եւ այն գրութիւնները, որք կը վերաբերին Քալիֆորնիական առանձին առաջնորդութեան վերածելու խնդրոյն: Այդ հարցը երեսփոխանական ժողովոյ սեղանին վրայ եկաւ ամսոյս 8-ին, եւ գրութիւններու ընթերցումէն եւ կարծիքներու փոխանակումէն յետոյ ՄԻԱՁԱՅՆՈՒԹԵԱՄԲ ՔՈՒԷԱՐԿՈՒԵՑԱՒ, ՈՐ ԳՈՀԱՑՈՒՄ ՏՐՈՒԻ ՊԱՏԳԱՄԱՒՈ-ՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻԴ ՓԱՓԱՔԻՆ: Ըստ այդմ՝ երեսփոխանական ժողովը պաշտօնապէս պիտի հաղորդէ ձեզի որոշումը, եւ միեւնոյն ատեն պիտի խնդրէ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն, որ նկատելով այն արդարացուցիչ եւ ստիպողական պարագաները, զորս արդէն ներկայացուցած էք Ն. Ս. Օծութեան՝ իր հաւանութիւնը շնորհէ առանձին առաջնորդութիւն մը հաստատելու առաջարկին: Ներփակ կը վերադարձնեմ խնդրոյն վերաբերեալ այն թղթերը, զորս ինծի դրկած էիք: Շնորհակալութիւն կը յայտնեմ այս առթիւ ինծ վստահեցուած պաշտօնին համար եւ կատարեալ յաջողութիւն կը մաղթեմ ձեր ազգօգուտ ջանքերուն: Մնամ յարգանօք՝ Վ. Մ. Քիւրքճեան«:

*Այս 1918 թուականի համար աւելորդ չի լինի բերել մի փաստ, կրկին առնուած դիւանական փաստաթղթերից: Ամերիկայի ազգային կեդրոնական վարչութեան 1918 թ. Յուլիս 12 թուակիր նիստը, որ գումարուել է Պոստոնում, առաջնորդական տեղապահ Տ. Շահէ Ծ. Վրդ.-ի նախագահութեամբ, մասնաւորաբար անդրադառնում է ԱՄՆ հայ գաղութի մէջ եկեղեցականների պակասի խնդրին եւ որոշում. «Ժողովը նկատի առաւ Ամերիկայի հայ գաղութին մէջ եկեղեցականներու պակասը, որու պատճառաւ շատ թեմեր կը մնան առանց հովիւի եւ զուրկ եւ հոգեւոր մխիթարութենէ: Խորհրդակցութիւններ կատարեցան յարմար քահանայացուներ գտնելու եւ ձեռնադրել տալու համար: Որոշուեցաւ շրջաբերականով մը դիմել հոգաբարձութեանց, որպէսզի իրենց շրջանակին մէջ եթէ կան յարմար ընտրելիներ, անոնց անունները ներկայացնեն կեդրոնական վարչութեան»:*

*Բոլոր այս գրագրութիւններն ու փաստաթղթերը յուշում են, որ 1918 թ. Ապրիլի 8-ին Ս. Էջմիածնի երեսփոխանական ժողովը քննարկել, քուէարկել եւ միաձայն համաձայնութիւն է տուել Գալիֆորնիայի առանձին թեմ եւ առաջնորդութիւն հիմնադրելու մասին: Որոշման իրագործումը թերեւս ձգձգուել է Հայաստանում պատմական աննպաստ ընթացքի պատճառով:*

---

Աղբիւրներ՝

«Էջմիածին» կրօնա-բարոյական ամսաթերթ, Ֆրէզնօ, 1918 թ. Սեպտեմբեր, էջ 68-69:

«Արարատ» ամսաթերթ Մայր Աթոռի, 1917-18 թթ.:

Պատրաստեց՝ Նորայր Պօղոսեան



## Լա Քրեսէնթա Հովիտի Սրբոց Առաքելոց Եկեղեցւոյ 30-Ամեակը

«Եկեղեցին հայկական մէն մի քարին տակ գետնի
Դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ունի»:

Վ. ԹԷՔԷԵԱՆ



*ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ*

*Շաբաթ, Հոկտեմբեր 20, 2018, երեկոյեան ժամը 8:00-ին, Լա Քրեսէնթա Հովիտի Թահանկա քաղաքին մէջ գործող Սրբոց Առաքելոց եկեղեցւոյ սրահին մէջ, հոծ բազմութեան մը ներկայութեամբ, քրիստոնէական ջերմ սիրոյ եւ ընտանեկան մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ այս Ծուխի հիմնադրութեան 30-ամեակի շէն ու շէնշող տօնակատարութիւնը:*

*Ձեռնարկը կը վայելէր Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի բարձր հովանաւորութիւնը: Սրբազան Հայրը, այդ օր կամքէ անկախ պատճառով չկրցաւ ներկայ ըլլալ այդ հանդիսութեան: Բայց իր օրհնութիւնները եւ մաղթանքները տեսաներիզով ղրկած էր ներկաներուն:*

*Իրենց ներկայութեամբ ձեռնարկը կը պատուէին Վան Նայսի Ս. Պետրոս եկեղեցւոյ շնորհաշատ հովիւ Տէր Շնորհք Աւագ քահանայ Տէմիրճեան, Ծուխի այժմու հոգեւոր հովիւ՝ Տէր Աւետիս քհնյ Աբովեան եւ երէցկինը՝ Արմինէ, նախկին հովիւներէն Արժանապատիւ Տէր Յովսէփ Աւագ քահանայ Յակոբեան եւ երէցկինը՝ Մարի, հանգուցեալ Տէր Դաւիթ քհնյ. Չէլֆէեանին երէցկինը՝ Շուշան Չելֆէեան եւ զաւակները հանդերձ ընտանեօք, իսկ Տէր Զաւէն Աւագ քհնյ. Տէմիրճեանի անհանգստութեան պատճառաւ զինք ներկայացուց Տիրամայր-երէցկին Մայրանուշ Տէմիրճեանը:*

*Ներկայ էին Կլենտէլի Քաղաքային Խորհուրդի անդամ Տիար Վարդան Կարպետեան եւ իր տիկինը՝ Կլէնտըլի Կրթական Խորհուրդի նախագահ՝ Տոքթ. Արմինէ Կարպետեան:*

*Ծուխի երիտասարդ եւ համակրելի հովիւ Տէր Աւետիսի բացման եւ բարի գալուստի ջերմ խօսքերէն ետք, տեղի ունեցաւ սեղանի օրհնութիւնը եւ ճաշի սպասարկութիւնը:*

*Ապա, ներկայ եղող կղերականներու կողմէ միասնական աղօթքներ եւ ընթերցումներ կատարուեցան, յատկապէս՝ Յովհաննէս Առաքեալի «Աստուած սէր է» խրատական խօսքի ընթերցումէն ետք, եկեղեցւոյ մանրանկարը ապակիէ տուփիկներու մէջ զետեղուած յուշանուէրներ տրուեցան Ծուխի հին եւ նոր ատենապետներուն, երէցկիներուն:*

*Պատրաստուած էր շատ գեղեցիկ եւ արհեստավարժ 12 վայրկեաննոց տեսանիւթ մը, խտացեալ ձեւով տալով Ծուխի պատմականը:*

*Խօսք առին Տ. Յովսէփ Աւագ քհնյ. Յակոբեան, Ծուխի հիմնադիր ատենապետ՝ Խաչիկ Ճանոյեան, երէցկին Շուշան Չէլֆէեան, Ծուխի քանի մը շրջանի ատենապետներ՝ Տոքթ. Վահան Ալադադեան եւ Տիար Օննիկ Ալեքսանեանց, իւրաքանչիւրը իր ծառայութեան շրջանէն յուշեր պատմելով:*

*Գործադրուեցաւ շատ հաճելի, յանպատրաստից գեղարուեստական յայտագիր մը, ուր ներկաները երգով, ասմունքով, ջերմ ու սիրալիր խօսքերով շէնցուցին երեկոն:*

*Իսկ եկեղեցւոյ Տիկնանց յանձնախումբի ժրաջան անդամուհիները պատրաստած էին այդ գիշերուան ընթրիքը, որ առատօրէն սպասարկուեցաւ ներկաներուն:*

*30-ամեակի կարկանդակի հատումէն ետք, երեկոն շարունակուեցաւ խմբերգներով եւ զուարճախօսութիւններով:*

*Ժողովուրդը իր բարձրագոյն տրամադրութեամբ բաժնուեցաւ սրահէն, խոստանալով շարունակել հոգեւոր այս տան պայծառութեան գործը:*

*Ծուխի 30-ամեակի տօնակատարութեան ներկայ եղող, կամ՝ ակամայ բացակայող բոլոր ծառայողներուն եւ նուիրեալներուն կ'ըսենք՝ Ձեր վարձքը կատար: Իսկ մեր եկեղեցիին համար ալ՝ առ Աստուած աղօթելով կ'ըսենք.—*

*«Թագաւոր երկնաւոր,*
*զեկեղեցի քո անշարժ պահեա,*
*եւ զերկրպագուս անուանդ քում պահեա,*
*ի խաղաղութեան»:*

## Հայ Մշակոյթի Ամսուայ Տօնակատարութիւն Յովսէփեան Վարժարանէն Ներս





*Հոկտեմբեր ամիսը մեղրահամ ու անուշաբոյր աւարտ ու վերջաբան մը ունեցաւ Յովսէփեան վարժարանէն ներս : 26-ի երեկոյեան, խուռներամ բազմութիւն մը տիրած էր «Կիրակոս» սրահը, ծնողներ եւ աշակերտներ անհամբեր էին ու խանդավառ վայլելու հայ Մշակոյթի ամսուայ նուիրուած՝ օրուայ հանդիսութիւնը:*

*Վարժարանիս տնօրէն Պրն. Շահէ Մանկրեան առաջին հերթին բեմ հրաւիրեց եօթներորդ եւ ութերորդ դասարանի աշակերտները որոնք արտասանեցին Մուշեղ Իշխանի՝ «Հայ լեզուն տունն է հայուն» բանաստեղծութիւնը պարզելով բազմերանգ դրօշակներ զանազան երկիրներու, ուր ջարդէն ճողոպրած հայ ազգի զաւակները կ'ապրին, կը գործեն ու կ'ըստեղծագործեն՝ վառ պահելով իրենց լեզուն, կրօնքը, ինքնութիւնն ու մշակոյթը:*

*Յայտագիրը ճոխ էր ու հայաշունչ. դասարանային հերթականութեամբ բեմ բարձրացող Յովսէփեանի տաղանդաւոր աշակերտները արտասանեցին հայ գիրերու գիւտին ու հայ ժողովուրդին նուիրուած արտասանութիւններ: Առաւել հիանալի կատարողութեամբ հնչեցուցին հայ մշակոյթին, մայր հայրենիքի ու 2800-ամեայ մայրաքաղաք Երեւանին նուիրուած երգեր: Հայերէն երգենք, Իմ պապիկի Հայաստան, Ջան Երեւան, Երեւան էրեբունի եւայլն՝ ղեկավարութեամբ երգի ուսուցչուհի Ալենուշ Եղնազարի, դաշնամուրի ընկերակցութեամբ Յովիկ Ոսկանեանի:*

*Կարմիր, կապոյտ, նարնջագոյնը տիրապետած էր բեմի յարդարումին եւ աշակերտներու պարային տարազներուն վրայ փոքրիկ Հայաստանի մը վերածելով հանդիսութեան վայրը:*

*Ջերմ ծափահարութեան եւ գնահատանքի արժանացան Պարուսոյց Փաթիլ Ալպարեանի պատրաստած Հզօր Հայաստան, Մենք պէտք է կռուենք, Մի նամակ մի համբոյր , Երեւան սիրոյ քաղաք, եւ վերջապէս Թուխով պարերը:*

*Ծնողներու հպարտանքի զգացումները աննկարագրելի էր ու անբացատրելի: Երախտագէտ էին Յովսէփեան դպրոցի տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, յատկապէս հայերէն լեզուի- ուսուցչուհիներուն, որոնք հայեցի դաստիարակութեամբ եւ անձնուիրութեամբ, կարողացան սերմանել հայ աշակերտի հոգւոյն մէջ սէրը հանդէպ իր լեզուին, մշակոյթին ու հայրենիքին, համոզուելով թէ հայ լեզուն ու մշակոյթը նոր սերունդի զաւակներուն դժուարին ուղին լուսաւորող կտակն ու փարոսն է:*

*Վարժարանիս տնօրէն Պրն. Շահէ Մանկրեան շնորհակալութիւն յայտնեց ձեռնարկի յաջողութեան սատարող բոլոր ուսուցչուհիներուն, պարուսոյցին եւ ներկաներուն ապա՝ բարի երթ մաղթեց բոլորին:*

*ԱՆԻ ՄԱՐՍԷԼԵԱՆ*

## Հայասէր Թուրք Լրագրող Սերտար Քորուճու

Շարունակուած էջ 6-էն

*«Պէտք է չմոռնալ, որ հալէպցի հայերը իրականութեան մէջ Արեւմտեան Հայաստանէն են, այսինքն՝ հին հալէպցի չեն: Այո, անոնք ծնած-մեծցած են Հալէպի մէջ, սակայն եթէ պատմութիւնը այլ կերպ զարգանար, եթէ ցեղասպանութիւնը չըլլար, անոնք պէտք է ծնէին Այնթապի, Քիլիսի, Վանի, Սասունի մէջ: Ինծի հետ զրուցած սուրիացի հայերուն մեծ մասը թրքերէն գիտէր: 1980-ականներուն ծնածներուն հետ ես նոյն քարթուններն ու ֆիլմաշարերը դիտած ենք: Բայց հակառակ այս ամէնուն՝ ցեղասպանութեան անցեալը թոյլ չի տար անոնց մնալ կամ դառնալ Թուրքիոյ մասնիկ», - Հալէպի հայկական պարբերականներէն «Գանձասար»ը հետ զրոյցի ժամանակ պատմած է Քորուճուն:*

## Լոս Անճելըսի Հայ Քոյրերու Վարժարանի Մշակոյթի Ամիսը



Հայկական Վարժարանները իրենց առաքելութեան գիտակից, զարկ կուտան հայ մշակոյթի զանազան տարրերուն եւ կը ջանան զայն դարձնել հայ աշակերտի առօրեան, յատկապէս Հոկտեմբեր ամսուայ ընթացքին, Հայ ուսուցիչի ջանքերը կը բազմապատկուին, որպէսզի իւրաքանչիւր հայ աշակերտի հոգիին մէջ վառ պահէ մշակոյթի փարոսը՝ հայկականութեամբ լուսաւորելու համար անոր միտքն ու հոգին:

Այս մտածումներէն մեկնած Հայ Քոյրերու վարժարանի տնօրէնութիւնն ու հայկական բաժանմունքը, ինչպէս միշտ, այս տարի եւս ձեռնարկեց Հայ Մշակոյթի հետ առնչուող զանազան միջոցառումներու Հոկտեմբեր ամսուան ընթացքին աշակերտները հաղորդ պահելու Հայ Մշակոյթի անկորնչելի արժէքներուն եւ օրուան անցուդարձերուն:

երգեր, կ՛աշխատին գծելով ներկելով եւ գրելով հայկական տառերը, հայկական պտուղներ, մանրանկարներ, հայկական տարազներ եւ կը ծանօթանան անոնց պատկանած շրջաններուն այս տարի առաւել այս բոլորին նաեւ վարժարանիս բոլոր դասարաններէ ներս աշակերտները գծեցին երեւանը խորհրդանշող ամէն տեսակի զարդանկարներ՝ գինանշան, Արգիշտի Թագաւորը խրոխտ իր սայլի վրայ, եւ տակաւին շատ մը զարեր եւ խորհրդանշաններ որոնք եկան զարդարելու վարժարանի որմերը աշակերտներուն տեսողութիւնն ու հոգեկան աշխարհը հագեցնելու եւ անոնց հոգին հպարտութեամբ լեցնելով միաժամանակ:

Վեցերորդ, Եօթներորդ եւ Ութներորդ կարգերը ունեցան Մշակոյթի ամսուան աւանդոյթ դարձած 8Հայկական ճաշերու



Նկատի ունենալով որ 2018-Ջ019 ուսումնական տարեշրջանը կը զուգադիպի Հայաստանի Երեւան Մայրաքաղաքի 2800 ամեակին, Ամենայն Հայոց բանաստեղծ՝ Յովհաննէս Թումանեանի Ծննդեան 150 ամեակին, Մշակոյթի ամսուան ձեռնարկներու թեման ընդհանրապէս եղաւ երեւանի ծանօթացումը իր զանազան երեսներով, ոտանաւորներով եւ երգերով փառաբանուեցաւ Արգիշտի Թագաւորի հիմնադրած բերդաքաղաքը եւ գծագրութիւններով եւ որմազդերով հայ մանուկին եւ պատանիին միտքին մէջ դրոշմուեցաւ տուֆ քարերու աշխարհ վարդագոյն երեւանը, աշակերտները նաեւ պատրաստուեցան Յովհաննէս Թումանեանի հեքիաթները բեմականացնելու եւ զայն հանդէսին ներկայացնելու թատրոնով:

Հինգերորդէն վար դասարանները, Մշակոյթի ամիսը կը սորվին արտասանութիւններ,

Ծրագիր»ը որ մեծ հաճոյքով իրականացուցին: 6րդ դասարանի աշակերտները խմբային դրութեամբ ծնողներու եւ հայերէնի ուսուցիչուհիի առաջնորդութեամբ, օգտագործելով վարժարանիս խոհանոցը, միասնաբար սորվեցան եւ պատրաստեցին հայկական ճաշ մը եւ մեծ հաճոյքով ալ ըմբոշխնեցին իրենց պատրաստած մանթին:

7-8-րդի աշակերտները խմբային դրութեամբ տունը պատրաստեցին հայական ճաշեր եւ ներկայութեամբ աշակերտներու տնօրէնութեան եւ ծնողներու՝ ներկայացուցին վարժարանէն ներս. ներկայացումները կատարուած էին «power point» ի միջոցաւ հայերէն գրութեամբ եւ բացատրութիւններով: Այս ծրագրին օգտակարութիւնը, իր խմբային աշխատանքի ստեղծած խանդա-

Շար.ը էջ 19

## Շամլեան-Թաթիկեան Վարժարանի Լոս Անճելըսի Շրջանաւարտից Միութեան 7-րդ Տարեկան Ճաշկերոյթը




Հոկտեմբերը նշուած է որպէս Հայ Մշակոյթի եւ Թարգմանչաց ամիս եւ ինչ հիանալի էր որ Շաբաթ ամսուան 13-ին, Glendale-ի Phoenicia ճաշարանին մէջ տօնակատարուեցաւ Պէյրութի մէջ գտնուող Շամլեան-Թաթիկեան Հայ Աւետարանական Վարժարանի, Լոս Անճելըսի Շրջանաւարտից Միութեան կազմակերպած շքեղ ճաշկերոյթ հաւաքոյթը:

Հոծ բազմութեամբ լեցուն էր սրահը: Ուրախ մթնոլորտ մը կը տիրէր մինչ դասընկերներ, ուսուցիչներ եւ բարեկամներ գիրար կ՛ողջունէին սիրով:

Օրուայ հանդիսավարն էր դպրոցի շրջանաւարտներէն Տիար Մինաս Ֆուրնուզլեան, որ համակրելի խօսքերով բարիգալուստ մաղթեց ներկաներուն, ապա բեմ հրաւիրեց Վեր. Սերոբ Մկրտիչեանը, բացման աղօթքի եւ սեղաններու օրհնութեան համար:

Մինչ ժողովուրդը համադամ ճաշերը կ՛ըմբոշխնէին, Շրջանաւարտից Միութեան յարգելի ատենապետ Ջաւէն Հաննեսեան, տեղեկութիւն տուաւ մինչեւ հիմա Շամլեան-Թաթիկեան Վարժարանին համար սատարած իրենց նիւթական եւ բարոյական օժանդակութեան մասին, եւ շնորհակալութիւն յայտնեց նուիրատուներուն:

Շատ հաճելի էր վայելել Փաթիլ եւ Սինթիա Ալպարեաններու պարուսոյցի աշակերտներուն հայկական պարերը: Երեք տարբեր տարիքներով հայ աշակերտներ խանդավառեցին ներկաները իրենց հայկական գունագեղ տարազներով պարելով, մանաւանդ «Ղաբամայի» շուրջպարը մինչ հայկական եռագոյնը կը ծածանէր հպարտութեամբ:

Օրուայ նուագախումբը եւ երգիչ Մարտիկ Յովհաննէսեան ոգեւորեց երեկոն ազգային ճոխ նուագներով ու մեներգներով:

Պէյրութէն յատկապէս այս հաւաքոյթին համար ժամանած էր Շամլեան-Թաթիկեան Վարժարանի ներկայ տնօրէնուհին՝ Օրիորդ Վարդուհի Պալըքճեան: Ան շնորհակալութիւն յայտնեց Լոս Անճելըսի Շրջանաւարտից Միութեան անդամներուն այս վեհ ձեռնարկը կազմակերպած ըլլալուն համար: Անոնք ամբողջ տարուայ ընթացքին կ՛աշխատէին այս երեկոյեան յաջողութեան համար: «Առանց ձեր աշխատանքին մեր վարժարանը երկու ոտքով կաղ պիտի ըլլար» ըսաւ տնօրէնուհին, մինչ պատմեց Պէյրութահայերուն նիւթական դժուարութիւններուն մասին: Հայ ծնողներէն շատերը ցաւ ի սրտի անկարող են կրթաթոշակ վճարել:

Աշակերտութեան կէսէն աւելին նպաստ կը ստանան որը կը հայթայթուի Ամերիկայի մէջ գտնուող այս Միութեան կողմէ: Սրտաճմլիկ էր եղելութիւնը լսել: Սակայն ազնիւ տնօրէնուհին կրկին անգամներ շնորհակալութիւն յայտնեց Հայ Աւետարանական Միութեան եւ Լոս Անճէլըսի Շրջանաւարտից Միութեան որ միշտ նեցուկ կանգնած են ու կը կանգնին հայ դպրոցին ուր հոգեշունչ եւ հայաշունչ դաստիարակութիւն կը ստանան 200-ի շուրջ աշակերտներ որոնք ունին 26 հոգինոց ուսուցչակազմ եւ գրասենեակի 3 պաշտօնեաներ:

Յարգարժան Տօքթոր Նազարէթ Տարագճեան, որ AMAA-ի նախագահն է, Անգլերէնով խօսք առաւ բաժնեկցելով թէ ինք ալ Շամլեան-Թաթիկեանի աշակերտ եղած է երկու տարիներ: Ամերիկայի Հայ Աւետարանչական Միութիւնը պատրաստ է ձեռք երկարելու հայ դպրոցին որ ան շարունակէ իր առաքելութիւնը քրիստոնէական ու հայկական ուսում տալով հայկակներու:

Իրաւաբան Կարօ Ղազարեան պատմեց թէ ինք իր նախնական ուսումը ստացած էր սոյն դպրոցէն ներս եւ իր ներկայ յաջողութիւնը կը վերագրէ այդ հաստատութեան ուր կրթանպաստով կրցած էր աւարտել դպրոցը :

Այս ճաշկերոյթին ներկայ էին շատ մը բարձրաստիճան քաղաքական անձնաւորութիւններ նաեւ հոգեւոր առաջնորդներ: Յատկապէս նշուեցաւ Պարոն Արամ Պուլղուրճեանը որ երկար տարիներ տնօրինած էր Շամլեան- Թաթիկեան դպրոցին մէջ:

Սոյն ձեռնարկին յուշատախտակներով գնահատուեցան երկու վեթերան պատկառելի եւ առաքինի ուսուցչուհիներ՝ յանձինս Տիկին Լուսի Մանճելիկեանի եւ Արտեմ Խաչատրեանի: Տիկին Լուսի ութը տարիներ պաշտօնավարած է Շամլեան-Թաթիկեան վարժարանին մէջ որպէս մանկապարտէզի ուսուցչուհի 1961-էն 1969: Ան նաեւ Կիրակնօրեայի մէջ ծառայած է ներմուծելով Քրիստոսի սէրը աշակերտներուն մէջ ցուցաբերելով գործնական սէր եւ գուրգուրանք: Այժմ այս շնորհալի ուսուցչուհին 94 տարեկան է: Երբ իրմէ խնդրուեցաւ որ մեներգէ, անհաւատալի հնչեղ եւ քաղցր ձայնով երգեց ու ծափերով գնահատուեցաւ ներկաներուն կողմէ:

Իսկ Տիկին Արտեմ 22 տարուայ ուսուցչական վաստակ ունեցող բացառիկ հեզահամբոյր կին մըն է:

Շար.ը էջ 19

# Իրբունի - Երեւան Ոստանը 2800 Տարեկան է



Անցեալի պատմութիւնը մի լուսաւոր լապտեր է, որ ամէն մի ժողովուրդ ձեռքին պէտք է ունենայ՝ իր ճամբէն անմոլոր գնալու - Յովհաննէս Թումանեան

ՊՕՂՈՍ ԱՐԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

*Է՜հ, անուշ, մեղմիկ աշուն էր, արեւն էր իր երթի ճամբից յոգնել, Հեփեստոս աստուածը մեղմել էր նրա քուրայի կրակը: Աշնանը գնացե՞լ ես Հայոց աշխարհի այգիներ՝ ծառերն էին ծնրադիր սպասում մշակներին, իրենց նախնիներին որպէս խաչեր տնկած ծառերից քաղելու հազար գոյնի տանձ, խնձոր, նարինջ դեղձ, Գեղամայ ծովի ափերի ծառերին խուրձ-խուրձ ոսկեգոյն չիչխան, արեւի կրակի լոյսից շիկնած հոն, Այրարատի դաշտի այգիներում հասունացած խաղող: Կարմիր, սպիտակ, ոսկեգոյն ողկոյզները ժպտում մշակին, տանում հնձաններ, քամում նրանց հիւթը, արեւից քաղած ջերմի ուժով փրփրում, հանդարտում, չհասունացած գինի, ապա, աստուածների ըմպելիք գինի դառնում, որ մարդիկ արեւից գինովնային, բանաստեղծները նրա ոգեղէն ուժից բոցեղէն իմաստութեան բան երկնէին: Աշնանը, Զանգեզուրի անտառների ծառերը արեւի եօթը, թէ՞ հազար գոյնի պարեգօտ հագնում, հրդեհ չէր այնտեղ, արեւն էր իր թեւերը փռել նրանց վրայ, որ հանգչէին արարումից:*

*Հոկտեմբեր ամսուայ երկրորդ կիրակի օրն էր, տօնական զգեստներով պճնուած մեր մանչերի հետ թրամուէյի փոխադրակառքում էինք, լիքը մարդիկ էին, պատահաբար մի տղամարդ ինձ հարցրեց՝ «Այսօր քաղաքի փողոցներում, փոխադրակառքերում ի՞նչու այսքան շատ մարդ է»: Հայրենակից՝ այսօր տօնական օր է, Արին Բերդ բլուրի ստորոտի հրապարակում Էրէբունի-Երեւան ոստանի հիմնադրման մեծարանքի տօնախմբութիւն է լինելու, Հայոց արքայ՝ Արգիշտին՝ Արին Բերդ բլուրի պալատից գալու է մասնակցի իր հիմնադրած Իրբունի ոստանի տարեդարձի տօնակատարութեանը:*

*Արին Բերդի բլուրի հրապարակի մատոյցներում էինք, Իրբունի-Երեւան ոստանի հազար-հազար մարդիկ էին այնտեղ, դժուար էր բեմահարթակին մօտիկ գնալ: Բարձրախօսներից «Երեւան Դարձած Էրէբունի» երգն էր բարձր հնչիւններով թեւածում, հրապարակում կանգնած մարդիկ ընկերակցում նրան: Բեմահարդակում, իրենց Ոստանին նուիրուած Հայոց քերթողների բանաստեղծութիւններն էին արտասանում, երգում նրան նուիրուած բազում երգեր: Նրանց հնչիւնները գնում հասնում Տուշպուէա-Տուշպա-Վան քաղաք, սահում Վանայ ծովի ջրերի վրայով, գնում շոյում Աղթամար կղզի Սուրբ Խաչ տաճարի որմերին բազմած Գագիկ Թագաւորի քարացած դէմքը, զարկում դուշմանի դէմքին...:*

*Թմբուկների զարկերի, ծիրանափողերի հնչիւնների հետ Արին բերդի բլուրի գագաթի ամրոցի պալատական սրահի 2800 աստիճաններից, առաւօտեան արեգակը ափի վրայ պահած, արեւի ճառագայթներից բռնկած ջահերը վեր պարզած պալատականների հետ Արմինայի Արգիշտի արքան էր իջնում: Արմին-հայերի ողջոյնի բացականչութիւնները երկինքն էին պատռում, հասնում «Խալտի-Հայկ» աստուծոյ Մուսասիր-Մուշ կամարակապ-սիւնազարդ տաճար: Աշխարհում առաջին կամարակապ-սիւնազարդ տաճարի վկան էր այն, աշխարհներ պիտի գնար տաճարներ, պալատներ, ապարանքներ լինելու: Արգիշտի արքան աւետում էր՝*

«Մեծութեամբ Խալդի աստուծոյ,
Արգիշտին, Մենուայի որդին, ասում է,
Իրբունի քաղաքը ես կառուցեցի
Հզօրութեան համար Բիաինա երկրի,
Եւ զսպան համար թշնամի երկրների:
Հողը ամայի էր, ոչինչ չկար կառուցուած այդտեղ:
Հզօր գործեր ես այդտեղ կատարեցի,
6600 զինուորներ Խաթէ եւ Ծուպանի
Երկրներից ես այդտեղ բնակեցրի»:

*Ոստանի քաղաքապետն է նրան դիմաւորում, հրաւիրում գահին բազմել: Արքայի պատուին «Էրէբունի-Երեւան» երգն է հնչում: Երեւան դարձած Իրբունի-ի պատուին երգեր-երգեր էին հնչում, Հայոց աշխարհի քերթողների արարած բանաստեղծութիւններ կարդում: Հրապարակն էր բացւում, խոշոր-խոշոր թմբուկներ ուսերից կախած թմկահարները ուժգին զարկում թմբուկներին, նրանց հետ անցնող երաժիշտները ծիրանափողեր հնչում, գնում բեմահարթակ, նրանց շրջապատում արեւից քաղած գոյներով հագուստներ հագած տղաներ, աղջիկներ շարք բռնում: Հայոց նախնիների շուրջ պար «Քոչարի»-ին է, խրոխտ պար, գերմանի ոստանում թմբուկի զարկերի հետ նորէն շուրջ պար բռնեցին, աշխարհին աւետեցին, որ Արմին-Հայ զինուորը պատերազմի իր ճանապարհին նուաճել էր այն: Սասնայ քաջերի, «Բերդ Պար», պարեր, իրենց նախնինրի շուրջ պարեր, ժողովրդային երգեր: Նրանց հետ երգում, պարում էին Հայոց մայր ոստանի տօնախմբութեան եկած Արմին-Հայ մարդիկ, համաժողովրդային տօնախմբութիւն էր, նրանց ակներից ուրախութիւն ժայթքում, բազում ժամեր պարեցին, ձայնակցեցին բեմահարթակ ելած Իրբունի-Երեւան մայր ոստանի, Այրարատի, Արագածոտնի, Մեծամորի, Հայոց շէների, աւանների պարի ու երգի համոյթների, հետ: Թմբուկների ու ծիրանափողերի հչիւնները փերիների թեւերին բազմած հասնում Խալտի-Հայկ աստուծոյ Տուշպուէա անունով կնոջ պատուին անուանուած Տուշպա-Վան ոստան, իրենց մեծարած «Արեւ» աստուծոյ ողջոյնը հաղորդում Արմինայի «Արա-Արայան» տոհմի իշխանազուններին: 782 (մ.թ. առաջ) թուականին հիմնադրուած Իրբունի-Էրէբունի-Երեւան Հայոց մայր ոստանի ծնունդն է, 2799 տարեկան է, աւելի կանուխ հիմնադրուած քան Աթէնքն ու Հռոմը:*

*1885 թուականը երեսին դրոշմուած խոշոր թմբուկը ուսին կախած թմկահարը ու նրա հետ յուշիկ քայլող երկու երաժիշտները փողեր հնչում, թմբուկ զարկում, նրանց հետ լեռնականի զգեստներ հագած տղաներ ու աղջիկներ, կանայք ու տղամարդիկ բարձրանում բեմահարթակ, խոնարհում արքային, ոստանի պետին: Թմկահարը զարկում թմբուկը, տղաները ու աղջիկները իրենց երկրի շուրջ պարն են բռնել, նայում Արարատի ձիւնոտ գագաթին, ձեռքերը դէպի նա մեկնած, կարծես ձիւնից պայթած ծաղիներ քաղէին ու այն արքային նուիրէին: Խենթացել էր թմբկահարը, զարկում ուժգին, պարողները ամուր տոփում գետինը, այդպէս էին պարել դուշմանի դէմ իրենց լերան կռուի իւրաքանչիւր հինգերորդ յաղթական ճակատամարտից յետոյ: Բեմահարթակում էին ահել կին ու տղամարդ, թմբկահարն էր մեղմիկ զարկում թմբուկը, Օ՜հ տեսնէիք նրանց պարը, թաշկինակների թափահարումից յառնած ելեւէջների նման նազանքով պար գալիս, մօտենում արքային, կիսածնրադրած ողջոյնում նրան, արեւից քաղած լոյս հոսում նրա վրայ: Իրենց երկրի տարազներով երկու պարմաններ բեմահարթակ գալիս, արեւին պարզած սպիտակաթոյր սուսերները իրար զարկում, կայծեր ժայթքում, ետ քաշւում նորէն, նորէն սուսերը զարկում իրար, թմկահարը ընդհատում թիմբուկի զարկերը, պարմանները գնում իրենց սուսերները նուիրում արքային: Բեմահարթակի մարդիկ որոտաձայն ծափահարում, «Կեցցէ Մուսա Լեռը» կանչում: Ոստանի պետն էր մեծարման խօսք ասում Մուսա Լերան հերոսամարտի քաջերի սխրանքին:*

*Արին Բերդ բլուրի հրապարակի շրջապատին սեղաններ էին, Այրարատի շինականներ իրենց այգիների բարիքը լցրել սեղաններին, Արարատեան դաշտի արեւից կարմրած խաղող, տանձ անուշահամ, Հայոց աշխարհի յաւերժութիւնը խորհրդանշող պայթած նուռ, որտեղից կարծես ահա կայծեր էին թռչելու, սեւաչուներով կարմիր ձմերուկ, հազար գոյնի խնձոր ու նարինջ դեղձ: Առանձին սեղանների վրա ապակեայ խոշոր ամաններով նոր բերքի չհասունացած գինի էր: Հայոց աշխարհի նախագահն էր եկել ողջոյնելու տօնախմբութեանը եկած մարդկանց, անցնում սեղանների մօտով, տարեց մի շինական, «Աշնանային» գինիով լեցուն բաժակն էր երկարել նրան, ''Նախագահ ջան, վայելիր այն, Հայոց ոստանի տօնն է այսօր, արբեցիր տօնախմբութեան արթնած հրճուանքով, արբեցիր իմ գինիով, ուրախացիր ժողովուրդի հետ, նրանց հետ շուրջ պար բռնիր»: Ով անցնում էր նրա սեղանի մօտով՝ ստիպում «Աշնանային» գինի խմել:*

*Մեր մանչերի հետ մայթեզրի քարին նստել հանգստանում էինք, տարեց մի մարդ մօտեցել ինձ, հարցրել՝«Ո՞վ էր այդ Արգիշտի արքան, ում հայերը յաճախ են յիշում, նրա անունով հաստատութիւններ անուանում, նոյնիսկ իրենց մանչերին նրա անունով մկրտում»: «Եթէ կը ցանկանայիք լսել նրա մասին, հակիրճ կը պատմէի» ասացի:*

*Նա իսկապէս Արմին-Հայ է, աշխարհակալ թագաւորը Արմինա երկրի, հրեաները «Արարատեան Թագաւորութիւն» են կոչել այն: Շատ ցաւալի է, որ այլազգի պատմաբաններ ու նաեւ Հայ պատմաբաններ նրա թագաւորած երկիրը անուանում են Ուրարտու-Ուրաշտու, իրեն էլ Արգիշտի թագաւոր: Այն երկրի անուանում չէ, Ասորեստանի թագաւորների արձանագրութիւններում «արտու-աշտու» կրակ բառի իմաստով յիշատակուած հրաբուխների երկիր «Արմինա»-ն է, որտեղ թագաւորել է Արգիշտին, նոյն կրակ բառի իմաստով այն անուանել էին նաեւ Նաիրի: Արգիշտին, իր հիմնադրած Իրբունի քաղաքի արձանագրութիւնում իր երկիրը անուանել է ոչ թէ Ուրարտու-Ուրաշտու, այլ «Բիաինա», նոյնպէս «Բիա» կրակ բառի իմաստով: Արմինա էր նրա երկրի անունը: Աքեմենեանների Դարեհ արքան, Բագահաստան-ի երեք տարբեր լեզուների 1200 տողանոց, երերք սիւնականի իր արձանագրութիւնում, նուաճած երկիրը Պարսկերէն լեզուի բնագրում անուանուել է Արմինա, էլամերէն լեզուի սիւնակում՝ Հարմինուա, Աքքատական լեզուի սիւնակում՝ Ուրաշտու: Ասորեստանի թագաւորների արձանագրութիւններում կրակ բառի իմաստով նոյն Արմինա երկրի տարածքը յիշատակուել է որպէս Ուրաշտու, այն նոյն Արմինա երկիրն էր, նոյն շատ երկրներ նաեւ կոչւում են տարբեր անուններով: Յոյն պատմագիրներ այդ երկիրը երբեք «Ուրարտու-Ուրաշտու» չեն անուանել, նոյն աշխարհագրական երկրի ու մարդկանց անունների «Ի» հնչիւնը հնչիւնափոխելով «Է» հնչիւնի այն կոչել Արմէնիա, նրան մարդկանց էլ Արմէններ:*

*Ասորեստանի թագաւորների արձանագրութիւններում, իրենց լեզուի սեպագիր գրերով «Բիաինա-Ուրաշտու-Ուրարտու» կրակի երկրի արքային Արգիշտի էին անուանել: Արգիշտի անունը բաղկացած է «Ար», «Գիշ» եւ «Տի» մասերից: «Ար»-ը՝ Արմինայի Արա կրակ-արեւ աստուած Արան է, «Գիշ»-ը Շումեր-Սումերների սեմական լեզուով նշանակել՝ «ծնել, սերել, ծնունդ, սերունդ»: «Ար-*

Շար.ը էջ 19

## ՄԱՐԶԱԿԱՆ

## Կարէն Խաչանովն Առաջին Տիտղոսը Նուաճեց «Մասթերս» Շարքի Մրցաշարերում



*Ռուսաստանի երկրորդ ռակետ Կարէն Խաչանովը նուաճեց Փարիզում անցկացուած «Մասթերս-100» շարքի մրցաշարի յաղթողի կոչումը:*

*Եզրափակիչում մոսկուացի 22-ամեայ թենիսիստը 7:5, 6:4 հաշուով յաղթեց աշխարհի երրորդ ռակետ, սերբ Նովակ Ջոկովիչին, որը Նոյեմբերի 5-ին կը գլխաւորի ATP-ի դասակարգման աղիւսակը: Մրցախաղը տեւեց 1 ժամ 38 րոպէ:*

*Այս յաղթանակի շնորհիւ հայ մարզիկն առաջին անգամ կը դառնայ աշխարհի 11-րդ ռակետ:*

*Կարէն Խաչանովը եւ Նովակ Ջոկովիչը մրցեցին երկրորդ անգամ: Նրանք հանդիպել էին նաեւ Ուիմբլդոնի մրցաշարի չորրորդ շրջանում, որտեղ սերբ թենիսիստը յաղթել էր 6:4, 6:2, 6:2 հաշուով:*

*Սա Կարէն Խաչանովի կարիերայի չորրորդ տիտղոսն էր եւ առաջինը՝ «Մասթերս» շարքի մրցաշարերում: Աշխարհի 18-րդ ռակետ Խաչանովը վերջերս նուաճել էր նաեւ Մոսկուայում անցկացուած Կրեմլի գաւաթի խաղարկութեան յաղթողի կոչումը:*

## «Մանչեսթեր Սիթին» Խփեց 6 Կոլ եւ Դարձաւ Առաջատար

*Անգլիական Պրեմյեր լիգայի 11-րդ տուրում «Մանչեսթեր Սիթին» սեփական խաղադաշտում 6:1 հաշուով վստահ յաղթանակ տարաւ «Սաութհեմփթոնի» նկատմամբ եւ գլխաւորեց մրցաշարային աղիւսակը: Դաշտի տէրերից դուբլի հեղինակ դարձաւ անգլիացի կիսապաշտպան Ռահիմ Ստերլինգը:*

*Այս յաղթանակից յետոյ Խոսեպ Գուարդիոլայի գլխաւորած թիմը հաւաքեց 29 միաւոր եւ 2 միաւոր առաջ անցաւ երկրորդ տեղում գտնուող «Լիվերպուլից», որն այս տուրում ոչ ոքի էր խաղացել Լոնտոնի «Արսենալի» հետ:*

## «Արսենալն» ու «Լիվերպուլը» Յաղթողին Չպարզեցին

*Անգլիայի առաջնութեան 11-րդ տուրի կեդրոնական խաղում մրցեցին «Արսենալն» ու «Լիւերպուլը» եւ բաւարարուեցին ոչ ոքի արդիւնքով՝ 1:1:*

*Լոնտոնում տեղի ունեցած հանդիպման հաշիւը բացեց գերմանացի Եուրգեն Կլոպի գլխաւորած թիմին անգլիացի կիսապաշտպան Ջեյմս Միլները, որն աչքի ընկաւ 61-րդ րոպէին:*

*Արսենալի յարձակուող Ալեքսանդր Լիակազեթի խփած կոլը՝ 1:1:*

*Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն «Արսենալի» մեկնարկային կազմում էր եւ փոխարինուեց 68-րդ րոպէին:*

## Անգլիականի Լգայի Գաւաթ. «Արսենալը» կը Խաղայ «Տոտենհեմի» Հետ

*Լոնտոնում կայացել է ֆուտպոլի Անգլիական լիգայի գաւաթի խաղարկութեան քառորդ եզրափակիչի վիճակահանութիւնը:*

*Լոնտոնի «Արսենալը» կիսաեզրափակիչի ուղեգիրը կը վիճարկի «Տոտենհեմի» հետ:*

*Անգլիական լիգայի գաւաթի գործող յաղթողը «Մանչեսթեր Սիթին» է:*

*Անգլիական լիգայի գաւաթ, քառորդ եզրափակիչ*
*«Արսենալ» - «Տոտենհեմ»*
*«Լեսթեր»/«Սաութհեմփթոն» - «Մանչեսթեր Սիթի»/«Ֆուլհեմ»*
*«Միդլսբրո» - «Բիորտոն Ալբիոն»*
*«Չելսի» - «Բորնմութ»*

## Մբապէի եւ Նեյմարի Կոլերը Յաղթանակ Բերեցին ՊՍԺ-ին

*Ֆրանսայի առաջնութեան 12-րդ տուրում ախոյեան ՊՍԺ-ն տանը մրցեց «Լիլի» հետ եւ առաւելութեան հասաւ 2:1 հաշուով: Գերմանացի Թոմաս Տուխելի գլխաւորած թիմին յաղթանակ բերեցին ֆրանսացի Կիլիան Մբապեի եւ պրազիլացի Նեյմարի գոլերը: Մբապեն նաեւ կոլային փոխանցում կատարեց:*

*ՊՍԺ-ն 12 յաղթանակից յետոյ 36 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը եւ արդէն 11 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղում գտնուող «Լիլի» նկատմամբ:*



## Լոս Անճելոսի Հ.Մ.Մ.ը Բաժակակիր

*Կիրակի, Նոյեմբեր 4, 2018, Հ.Մ.Մ.ի ֆուտպոլի «Angel» խումբը Լոս Անճելոսի Կրիֆիթ Բարք զբօսայգիի ֆուտպոլի դաշտին վրայ կայացած ախոյեանական մրցումին յաղթական դուրս եկաւ 2-0 արդիւնքով Cuzcatlan խումբին դէմ:*

*Սոյն խիստ հետաքրքրական մրցումն անցաւ լարուած մթնոլորտի մէջ: Առաջին կոլ նշանակողն եղաւ Արթին Անդրէասեանը, իսկ երկրորդը՝ Ռաֆֆի Զատոդեանը: Կ՚արժէ այստեղ նշել որ օրուան բերդապահը4 Վանանդ Մկրտիչեան իրեն յատուկ ճկունութեամբ կրցաւ բազմաթիւ դժուարին պարագաներ յաղթահարել: Այս առթիւ կը շնորհաւորենք Հ.Մ.Մ.ի վարչութիւնն ու մարզիկները, մաղթելով յարատեւութիւն եւ նորանոր յաջողութիւններ:*

*Խաղի աւարտին տեղի ունեցաւ պատշաճ ընդունելութիւն Փասատինայի «Ռաֆֆի» ճաշարանին մէջ: Այս առթիւ վարչութեան ատենապետ՝ Վարդան Գօճապապեան իր շնորհաւորութիւնները փոխանցեց խումբի անդամներուն եւ պատասխանատուներուն:*

## Եւրոպայի 16 Ակումբներ Մտադիր են Դուրս Գալ ՈւԵՖԱ-ից եւ Ստեղծել Սուպերլիգա



*Եւրոպայի 16 առաջատար ակումբները մտադիր են 2021 թուականին դուրս գալ ՈւԵՖԱ-ից եւ ստեղծել անկախ Սուպերլիգա, գրում է գերմանական Spiegel-ը Football Leaks-ի փաստաթղթերի հիման վրայ:*

*«Մանչեսթեր Եունայթեդը», «Մանչեսթեր Սիթին», «Լիւերպուլը», «Չելսին», «Արսենալը», «Ռեալը», «Բարսելոնան», «Յուվենտուսը», «Միլանը», ՊՍԺ-ն եւ «Բաւարիան» կը լինեն Սուպերլիգայի հիմնադիրները եւ երաշխաւորուած տեղ կ՚ունենան 20 տարուայ ընթացքում: «Ինտերը», «Ռոման», «Աթլետիկոն», Դորտմունդի «Բորուսիան» եւ «Մարսելը» կը լինեն հիւրի կարգավիճակում: Սուպերլիգան կ՚ունենայ խմբային փուլ եւ փլեյ-օֆֆ:*

*Նշւում է, որ «Ռեալը» խնդրով զբաղուող խորհրդատուական ընկերութիւնից մի քանի օր առաջ ստացել է գաղտնի նամակ, որտեղ ասւում է, թէ Սուպերլիգայի հիմնադրման մասին պայմանագիրը 16 ակումբները կը կնքեն այս ամիս:*

## Պաշտօնական. Ռունին Վերջին Անգամ Հրաւիրուել է Անգլիայի Հաւաքական



*Ամերիկեան «Դի Սի Եունայթեդի» յարձակուող Ուեյն Ռունին հրաւիրուել է ֆուտպոլի Անգլիայի ազգային հաւաքական՝ մասնակցելու ԱՄՆ-ի թիմի դէմ ընկերական խաղին, փոխանցում է Անգլիայի ֆուտպոլային ասոցիացիայի կայքը:*

*Հանդիպումը Նոյեմբերի 15-ին Լոնտոնի «Ուեմբլի» ստադիոնում կ՚անցկացուի Ռունիի պատուին՝ ի աջակցութիւն 33-ամեայ ֆուտպոլիստի բարեգործական ֆոնտին: Այդ խաղը Ռունիի համար կը լինի 120-րդն ու վերջինն Անգլիայի հաւաքականի կազմում:*

*Ուեյն Ռունին Անգլիայի հաւաքականում չի խաղում 2016 թուականից: Նա ազգային թիմի պատմութեան լաւագոյն ռմբարկուն է 53 կոլով: MLS-ի ընթացիկ մրցաշրջանում անգլիացի յարձակուողը մասնակցել է 20 խաղի, դարձել 12 կոլի ու 6 կոլային փոխանցման հեղինակ:*

## Շամլեան-Թաթիկեան Վարժարան

Շարունակուած էջ 16-էն

*Իշխանուհիի կեցուածքով եւ քաղցր ժպիտով բեմ եկաւ ստանալու իր գնահատագիրը պարոն Ջաւէն Հաննէսեանի կողմէ: Տիկին Արտեմ իր շնորհակալական խօսքը բաժնեկցեցաւ եւ հայաշունչ հոգիով արտասանեց պատշաճ ինքնուրոյն բանաստեղծութիւն մը՝ հմայելով ներկայ հոծ բազմութիւնը:*

*Այս ձեռնարկին նաեւ գնահատուեցան Միութեան գործօն նախկին վարչականներէն Լիզա Մանոյեան, Փօլին Պետիկեան եւ Վիքի Շահրաշեան: Վարձքերնիդ կատար ժրաջան տիկիններ ձեր նուիրական սիրայօժար աշխատանքին համար: Ճաշկերոյթին ընթացքին եղան շատ մը սրտաբուխ նուիրատուութիւններ, որոնք պիտի գումարուին նախապէս եղած նուիրատուներու ցանկին: Երախտապարտ ենք Շամլեան-Թաթիկեան Հայ Ուսումնական Շրջանաւարտից Միութեան անդամներուն, բարեկամներուն եւ հիւրերուն որոնք միշտ նեցուկ կը կենան Հայ դպրոցին: Թող Աստուած վարձահատոյց ըլլայ ձեզի որ կը գործէք անխոնջ եւ անձնուիրութեամբ որպէսզի Հայ դպրոցը միշտ յառաջ երթայ վասն Ցիսուսի եւ վասն Հայրենեաց:*

*Դպրոցասէր ներկայ մը*

## Իրբունի - Երեւան Ոստանը

Շարունակուած էջ 17-էն

*գիշ» նշանակում է՝ արածին, կրակարեւի ասուած «Ար-Արա»-ից սերուած, «Ար-Արա»-ի ծնունդ-սերունդ»: «Տի» բաղադրիչը «կենդանի-ապրող» իմաստ ունի: Շումեր-Սումերերէն սեմական լեզուով «Գիշ» եւ «Մա» անուանումները հոմանիշ բառեր են: «Արգիշ-տի» անունը, վերոյիշեալ ստուգաբանութեամբ հնչում է «Արմա-խս»: Իսկ ո՞վ էր Արմախը: Պատմիչ Թովմա Արծրունին իր «Արծրունեաց Տան Պատմութիւն» երկում յիշատակել է հայոց Արմախս թագաւորին, գահակալել Ասորեստանի Նինոս թագաւորի ու նրա կնոջ՝ Շամիրամի գահակալութեան ատեն, կառուցել Արմաւիր քաղաքը: Ք.ա. 780-ական թուերին գահակալել է նաեւ Արգիշտին, արմինների Արատտա պետութեան ոստան Մեծամորի մօտ կառուցել իր արձանագրութիւններում յիշատակուած Արգիշտիխինլի քաղաքը: Պատմահայր Մովսէս Խորենացին էլ իր մատեանում հաւաստել, որ հայոց Արմախս արքան նոյն վայրում կառուցել է Արմա-ւիր քաղաքը, իր որդի Արաստ-ի անունով Երաստ է անուանել Արաքս գետը: «Արգիշտի-Արգիշտիխինլի-Արմաւիր» քաղաքի անունների, կառուցման վայրի ու ժամանակի նոյնութիւնը նաեւ հաստատում են, որ Արգիշտին հայոց Արամ-Արամէ թագաւորի Արա-Արայան գահատոհմի Արմինա երկրի Արմախս արքան է եւ ոչ թէ չգոյ Ուրարտու-Ուրաշտուի արքան: Ասորեստանի արքաները իրենց արձանագրութիւններում հրաբուխների կրակի երկրներ՝ Արմինա, Նաիրի, Արմանի, Սուբարտու, Արատտա Ասորերէն լեզուի կրակ իմաստով Ուրարտու-Ուրաշտու են անուանել: Արգիշտին, որ շքեղ բեմականացումով այսօր մեծարել ենք, նա Իրբունի-Էրէբունի-Երեւան մայր ոստանի հիմնադիրն է, աշխարհակալ թագաւորը Արմինա-Հայաստանի: Զրուցակիցս անչափ շնորհակալութեամբ գնացել «աշնանային» գինի խմելու:*

## Լոս Անճելըսի Հայ Քոյրերու Վարժարան

Շարունակուած էջ 16-էն

*վառութեան կողքին, նաեւ կը կայանայ մեր առօրեայ կեանքի մէջ գործածական բառերը սահուն եւ ճշգրիտ հայերէնով օգտագործելու վարժութեան մէջ, եւ կը նպաստէ զարգացնել աշակերտներու մօտ հայերէնով հրապարակախօսութեան վարժութիւնը:*

*Ուրբաթ,* Hogdympyr *26ի առաւօտեան տեղի ունեցաւ Մշակոյթի Ամսուան եզրափակիչ հրապարակային հանդիսութիւնը, ներկայութեամբ վարժարանիս Առաքինազարդ Քոյրերուն, հիւրերուն, ծնողներուն, ուսուցչական կազմին եւ պաշտօնէութեան: Օրուան հանդիսավարն էր Հայերէն ուսուցչուհի Նորա Պուլտուգեան,*

*Հայաստանի քայլերգով սկսած հանդիսութիւնը շարունակուեցաւ Տնօրէնուհի՝ Քոյր Լուսիայի բացման խօսքով, ուր Քոյր Լուսիա մանրամասն բացատրեց մշակոյթի կարեւորութիւնը հայ ժողովուրդի կեանքէն ներս, ապա բոլոր աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին երգելով, արտասանելով եւ նուագելով հայ գրականութեանէն եւ երաժշտութենէն հայ լեզուին նուիրուած դասական-ներ նաեւ յատկապէս բարձր դասարանները մեկնաբանեցին Երեւանի գովքը հիւսող երգեր եւ ոտանաւորներ, աշակերտներուն երգեցողութեան կ՛ընկերակցէր դաշնակի վրայ նուագելով վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի՝ Վարդուհի Պաղտասարեան:*

*Հանդիսութեան առաջին մասով աշակերտները երգեցին արտասանեցին եւ 1-2րդ դասարանի աշակերտները մեծ հրճուանքով գեղեցկօրէն ներկայացուցին «Ղափամայ»ն երգով պարով եւ տարազներովեւ ղափամայով:*

*Օրուան խօսքը փոխանցեց Նորա Պուլտուքեան, ան Մշակոյթի կարեւորութիւնը շեշտելէ ետք, նաեւ թուեց հայ մշակոյթի տիտանները, որոնք մեծ ներդրում ունեցած են հայ կեանքէն ներս: Հանդիսութեան երկրորդ մասը միջնակարգի աշակերտները արտասանեցին Ծառուկեանի «Հէյ Ջան Երեւան»ը ութերորդը՝ Սեւակի Երեւան էրեբունին իսկ 6-րդի աշակերտները ներկայացուցին Թումանեանի «Անխելք մարդը», մեծ հմտութեամբ եւ գեղեցիկ դերակատարութեամբ ներկայացան մինչ կարգ մը աշակերտներ հայկական տարազներով երկլեզու ներկայա-ցուցին Յովհաննէս Թումանեանի կեանքը: Թատրոնին յաջորդեց առաջին դասարանի աշակերտներու եարխուշտայ պարը, ապա հանդիսութիւնը փակուեցաւ Երեւան էրեբունի գոտեպնդիչ խմբերգով:*

*Հանդիսութեան աւարտին վարժարանիս Տնօրէնուհի՝ Քոյր Լուսիա մեծ ուրախութեամբ ողջունեց աշակերտները, որոնք ջանք չէին խնայած այս հանդիսութիւնը կատարեալ ներկայացնելու, ապա շնորհակալութիւն յայտնեց Հայերէն լեզուի դասաւանդ ուսուցչուհիներուն եւ երաժշտութեան ուսուցչուհիին, որոնք լրիւ տարուան ընթացքին վառ կը պահեն հայ մշակոյթի փարոսը, զանոնք շնորհաւորելով ծաղկեփունջերով եւ ծափողջիւններով:*

*Հայ ուսուցիչ, պարարտ հողերու մէջ ցանած սերմերուդ առողջ ծիլերը պիտի ծաղկին ու ծլարձակին այս պատանիներու ապագայ գործունէութեան ընդմէջէն:Անոնց հոգին ու միտքը ը թրծուին այսօր քու հայաշունչ հովանիիդ ներքեւ եւ կը կերտուի վաղուան յանձնառու հայ երիտասարդը:*

*Վարձքդ կատար Սերմնացան:*

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*Գաղութիս ծանօթ արուեստագէտներէն անուանի դաշնակահար փրոֆ. Լեւոն Աբրահամեանի մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն եւ հարազատներուն:*

UNITED STATES POSTAL SERVICE

**Statement of Ownership, Management, and Circulation (All Periodicals Publications Except Requester Publications)**

1. Publication Title: MASSIS WEEKLY
2. Publication Number: 0 6 6 7 - 3 1 0
3. Filing Date: 11/05/2018
4. Issue Frequency: WEEKLY, except two weeks in August
5. Number of Issues Published Annually: 50
6. Annual Subscription Price: $50
7. Complete Mailing Address of Known Office of Publication (Not printer) (Street, city, county, state, and ZIP+4®): 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

Contact Person

Telephone (Include area code): (626) 797-7680

8. Complete Mailing Address of Headquarters or General Business Office of Publisher (Not printer): 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104
9. Full Names and Complete Mailing Addresses of Publisher, Editor, and Managing Editor (Do not leave blank)

Publisher (Name and complete mailing address): SDHP 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

Editor (Name and complete mailing address): DR. ARSHAG KAZANJIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

Managing Editor (Name and complete mailing address): VAHE ACHABAHIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

| | | | | |
|---|---|---|---|---|
| a. Total Number of Copies (Net press run) | | | 3,500 | 3,500 |
| b. Paid Circulation (By Mail and Outside the Mail) | (1) | Mailed Outside-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies) | 123 | 123 |
| | (2) | Mailed In-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies) | 383 | 383 |
| | (3) | Paid Distribution Outside the Mails Including Sales Through Dealers and Carriers, Street Vendors, Counter Sales, and Other Paid Distribution Outside USPS® | 2,400 | 2,400 |
| | (4) | Paid Distribution by Other Classes of Mail Through the USPS (e.g. First-Class Mail®) | 66 | 66 |
| c. Total Paid Distribution (Sum of 15b (1), (2), (3), and (4)) | | | 2,972 | 2,972 |
| d. Free or Nominal Rate Distribution (By Mail and Outside the Mail) | (1) | Free or Nominal Rate Outside-County Copies included on PS Form 3541 | 40 | 40 |
| | (2) | Free or Nominal Rate In-County Copies Included on PS Form 3541 | 35 | 35 |
| | (3) | Free or Nominal Rate Copies Mailed at Other Classes Through the USPS (e.g. First-Class Mail) | | |
| | (4) | Free or Nominal Rate Distribution Outside the Mail (Carriers or other means) | 300 | 300 |
| e. Total Free or Nominal Rate Distribution (Sum of 15d (1), (2), (3) and (4)) | | | 375 | 375 |
| f. Total Distribution (Sum of 15c and 15e) | | | 3,347 | 3,347 |
| g. Copies not Distributed (See Instructions to Publishers #4 (page #3)) | | | 153 | 153 |
| h. Total (Sum of 15f and g) | | | 3,500 | 3,500 |
| i. Percent Paid (15c divided by 15f times 100) | | | 88.7% | 88.7% |

16. Publication of Statement of Ownership

☐ If the publication is a general publication, publication of this statement is required. Will be printed in the ______ issue of this publication.

☐ Publication not required.

**VA Print Media**

Book Printing • Hard Covers • Year Books

Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ

Հին Գիրքերու Նորոգութեան Համար

Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻն



**Vahe Atchabahian**

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104

**Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924**

vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ARMENIAN AMERICAN MUSEUM

**Building Together.**
**Leaving a Legacy.**
**Կառուցենք միասին:**
**Փոխանցենք ժառանգութիւն:**




## Join the *Groundbreaking* Campaign!








| Permanent Armenian Exhibition<br>Հայկական մշտական ցուցահանդէս | Traveling Multicultural Exhibitions<br>Բազմամշակութային շրջուն ցուցահանդէսներ | Performing Arts Theater<br>Կատարողական արուեստի թատրոն | Demonstration Kitchen<br>Ցուցադրական խոհանոց | Learning Center<br>Ուսումնական կեդրոն | Museum Archives<br>Թանգարանի արխիւներ |
|---|---|---|---|---|---|

Քալիֆորնիոյ Հայ-Ամերիկեան Թանգարանը եւ Մշակութային կեդրոնը պատմական շինութիւն է, որ պիտի կառուցուի Կլենտէյլ քաղաքին մէջ: Կեդրոնը կը ներկայացնէ մեր պատմութիւնը, կը պահպանէ մեր մշակոյթը, եւ կը զօրացնէ մեր համայնքը: Մասնակցեցէ՛ք առաջին կարգի այս համաշխարհային եւ Մշակութային թանգարանի եւ Կեդրոնի կառուցումին:

The Armenian American Museum and Cultural Center of California is a historic landmark developing in the City of Glendale. The center will share our story, preserve our culture, and strengthen the community. Take part in building the first world class museum and cultural center of its kind in America. Join and support the Groundbreaking Campaign by contributing today.

**DONATE YOUR $10 TODAY**

# TEXT "MUSEUM" TO 20222
# OR VISIT JOINAAM.ORG

MAILING ADDRESS: 104 NORTH BELMONT STREET, SUITE 205, GLENDALE, CA 91206
The Armenian American Museum and Cultural Center of California is a 501(c)(3) non-profit organization.
Your donation is tax-deductible allowed by law. Federal Tax ID: 47-2465341.

ACF AGBU Նոր Օր